



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

22.258

331

U-64



Р. У.

405

ԱՇԽԱՏԱՆՔ

ԵՒ

ԿԱՊԻՏԱԼ

331

12-64

15 JAN 2010

331

Ա-64

№ 11 Մշակույթի նախարարության ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՆԵՐԸ

2007-11-5

300  
1152-Բ

Բ. Ս.



**ԱՇԽԱՏԱՆՔ**

ԵՒ

**ԿԱՊԻՏԱԼ**

11457

Գրքի Բ. 20 կողմ.

Ռուս. բարձր Ա. Յ.

**Թ Ի Ֆ Լ Ի Ս**

Երկրորդ աստիճանի «Լեհիա» ընկ. Մալ. փող. №5.

1907

(229)

22.258

15 FEB 2013

Ներքոմ եմ

ԱՆՄՕՌ-ԱՆԱԼԻ ԹԱՆԿԱԳԻՆ,

Վաղաժեռիկ կնոջս

**ՀԵՂԻՆԷԻ**

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Յախաննես Դաբեան

10969

## Աշխատանք եւ կապիտալ

*Յկզբնական տեղեկութիւններ քաղաքական-  
տնտեսական*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Յառաջաբան
- I. Աշխատանք եւ նրա բաժանումը
  - II. Շեղումներ
  - III. Ապրանքների արժեք
  - IV. Փող եւ գին
  - V. Կապիտալ
  - VI. Բանուորական ոյժը որպէս ապրանք
  - VII. Յաւելեալ արժեք
  - VIII. Կապիտալի աճումը



### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Իւրաքանչիւրին յայտնի է, որ մարդիկ ամեն ժամանակ չեն ապրել այնպէս, ինչպէս այժմ:

Թէ նրանք սկզբում ինչպէս էին ապրում, ինչպէս աշխատում և ինչպէս օգտուում իրենց աշխատանքի պտուղներին՝ այդ մասին մենք տեղեկանում ենք գիտնականների գրած գրքերից:

Մենք գիտենք, որ եղել է ժամանակ, որ մարդիկ չեն ունեցել ոչ մի զէնք, բացի աղեղից, գաւազանից և բարէ դանակից: Ի նարկէ այդ զէնքում խօսք չի կարող լինել հողի մշակութեան և նստակեաց կեանքի մասին: Սովորաբար մարդիկ ստիպւած էին մի տեղից տեղափոխուել մի ուրիշ տեղ մնունդ փնտռելու: Բայց որովհետև գինւած էին հասարակ աղեղով և փայտով, ուստի հնարաւորութիւն չէին ունենայ մեծ կենդանիներ բռնելու և գիշատիչ վագաններից պաշտպանուելու. այդ պատճառով ստիպւած էին խմբովին ապրել, միասին ջանք տանել ապրելու միջոցներ փնտռելու համար և ապա ընդհանուրի ձեռք բերած որսը բաժանել իրանց մէջ:

Ժամանակի ընթացքում մարդս աստիճանաբար վարդացրել է իւր միտքը, կատարելագործել գործիքները, սովորել է օգտուել հողի տուրքերից և դրա շնորհիւ ուժեղացրել էր: Նա դարձել է նստակեաց և սկսել է զբաղուել բոյսերի անկարկութեամբ: Այն ժամակ նա ինքն արդէն առանց ուրիշի օգնութեան կարող էր բաւարարութիւն տալ իւր պահանջներին որպէսզի ապրելու միջոցներ ձեռք բերի: Հասկանալի է, որ այժմ էլ պէտք էր միանալ մեծ և փոքր խմբերի հետ աւելի ուժեղ թշնամիներից պաշտպանուելու համար: Նոյն իսկ խմբի մէջ իւրաքանչիւրն աշխատում էր միայն իւր համար, պատրաստելով այն բոլորը, ինչ սր իրան հարկաւոր էր և իւր աշխատանքով

ձեռք բերած բոլոր բաների վրայ ունէր սեփականութեան և օգտելու կատարելա իրաւունք: Բայց այդ ժամանակներում մարդը դեռ այնքան զարգացած և խելահաս չէր, օգտելու բնութեան տուրքերից այնպէս, ինչպէս հարկաւոր էր. չունէր կատարելագործւած գործիքներ և ապրում էր շատ աղքատութեան մէջ:

Անցան հարիւր նոյն իսկ հազար տարիներ: Մարդս աւելի լաւ ծանօթացաւ աստիճանաբար բնութեան հետ, իմացաւ շատ նորանոր բաներ, կատարելագործեց աշխատանքի հին գործիքները և հնարեց նորերը. սովորեց օգտել քամու և ջրի ուժից: Ի հարկէ, դրանց հետ միասին մեծացաւ և նրա բարիկեցութիւնը: Բայց միաժամանակ գիտակցութեան և փորձառութեան պրօզրեսի հետ միասին մարդկային սկզբնական միակերպ գործիքների և զբաղմունքների մէջ առաջացաւ յայտնի փոփոխութիւն և անհնարին դարձաւ, որ միևնոյն մարդը միաժամանակ բոլոր գործիքներին միակերպ տիրապետի և բոլոր աշխատանքներով զբաղւի: Ինչպէս օրինակ՝ նա կարողանար լաւ կօշիկներ կարել, միաժամանակ լաւ տներ շինել և աշխատել դաշտում: Ընդհակառակը, երևաց, որ միայն մէկ աշխատանքով զբաղող մարդը, կատարում է այն աւելի լաւ և արատ, քան եթէ նա զբաղւի միաժամանակ մի քանի աշխատանքներով: Այդ պատճառով մարդկանց մէջ առաջացաւ աշխատանքի բաժանում. մի քանիսը սկսեցին զբաղւել բացառապէս երկրագործութեամբ, միւսները բրուտութեամբ երրորդները հիւանութեամբ և այլն:

Հասկանալի է, որ երկրագործները սկսեցին ստանալ աւելի հացահատիկներ, քան անհրաժեշտ էր իրանց սեփական գործածութեան համար: Իսկ իրանց մօտ մնացած աւելորդը տալիս էին նրանք կօշիկակարին կօշիկների, դերձակին հագուստի, հիւսնին տունը շինելու համար և այլն: Այսպիսով, ոչ կօշիկակարը, ոչ դերձակը և ոչ էլ հիւսնը հարկադրւած չէին զբաղւել երկրագործութեամբ, որովհետև նրանք հացը ստանում էին իրանց աշխատանքի փոխարէն: Իրանցից բոլորի համար ահապին օգուտ ստացւեց: Գութանի վրայ վարժւած երկրագործը գուցէ երկու կամ աւելի շաքաթներ կ'կորցնէր մի գոյգ կօշիկ կարելու համար, այն ինչ կօշիկակարը այդ միևնոյն գոյգ կօշիկը կ'կարէր մէկ օրում: Երկրագործը կօշիկի

փոխարէն նրան այնքան հաց, կտար, որքան կարողացել էր ձեռք բերել այն ժամանակէլ ընթացքում, որքան ժամանակ կօշիկակարը կորցրել է իւր համար կօշիկ կարելիս: Այսպիսով նա ինչպեց շատ ժամանակ՝ ամբողջ 13 օր:

Սակայն այդ ժամանակ էլ մարդիկ գործ էին ածում նորից իրանց սեփական պիտոյքներին բաւարարութիւն տալու համար իրանց արտադրած մթերքների մեծ մասը և միայն աննշան մասն էին փոխանակում ուրիշ առարկաների հետ:

Բայց յայտնի է, որ միայն ձեռքով շատ քիչ բան կարելի է պատրաստել, ուստի եթէ արդիւնաբերութեան տարբեր եղանակներ գոյութիւն չունենային, մարդս գատապարտւած կըլինէր անվերջ կարիքների:

Բարեբախտաբար մարդս հնարել է մեքենան: Մեքենան մարդու հնարաւորութիւն է տուել կարճ ժամանակում և համեմատաբար քիչ ջանքով աւելի լաւ պատրաստել այն առարկաները որոնք երբեքն պահանջում էին ձեռքի բաւականին ծանր և անախորժ աշխատանք և որոնք, նոյնիսկ զիմացկանութեան և նրբութեան տեսակէտից փառաւորապէս տեղի կըտային սովորական գործարանական ապրանքներին: Գիւղական դարբինը մի վատ պայտ շինելու համար կորցնում է մի քանի ժամէլ ծանր և տանջալի աշխատանք հնոցի մօտ, այն ինչ մի գործարանի բանուոր մեքենայի օգնութեամբ Ամերիկայում պատրաստում է մի բոպէնում մի քանի հարիւր ամուր և գեղեցիկ պայտեր: Չուլհակը ճիկէվիլի (СТАНОКЪ) վրայ պէտք է բաւականին տանջւի, որ կարողանայ մի քանի արշին կտաւ գործել, այն ինչ մեքենայով մի ժամում գործւում է 1000 արշին կտաւ:

Այսպէս ուրեմն, ամենայն բանում մեքենան փոխարինում է մարդուն և հնարաւորութիւն է տալիս քիչ աշխատանքով, պատրաստել բաւականին մեծ քանակութեամբ ապրուստի անհրաժեշտ պիտոյքներ: Ահա ինչու հարիւր տարի սրանից առաջ լաւ հագուստը, սենեակը և առհասարակ ապրուստի պիտոյքները համարւում էին փարթամութիւն, այն էլ մատչելի ոչ շատերին, որովհետև ձեռքի աշխատանքով չէր կարելի ձեռք բերել շատ ապրանք, իսկ այժմ մեքենան կարող է պատրաստել այնպիսի քանակութեամբ, որ բաւական կլինի բոլոր մարդկանց պահանջներին բաւարարութիւն տալու համար:

Գիտնականները հաշուել են, որ եթէ մարդիկ աշխատեն օրեկան 5 ժամ, ապա նրանք արդիւնարեւութեան գործիքների ներկայ դրութեամբ (մեծ մեքենաների և գործարանների գոյութեան ժամանակ) և մի քանի անյարմարութիւնների վերացմամբ կ'կարողանային իրանց բոլոր կարիքներին լիութի բաւարարութիւն տալ: Իսկ եթէ մեքենաների մէջ աւելի կատարելագործութիւններ լինէին մտցրած և աշխատանքը վերջնականապէս լինէր մեքենաներով, փոխարինւած. այն ժամանակ օրեկան 3 ժամայ աշխատանքը բաւական կ'լինէր: Այդ դէպքում կրթութեան, ղարճութեան, և հանգստութեան համար մարդուն ինչքան ժամանակ կ'մնար:

Այն բոլորից, ինչ որ մենք ասացինք, երեւում է թէ ինչպէս է նպաստում մեքենան մարդկային բարօրութեան բարձրացմանը, ինչպէս է աշխատանքը կրճատում ու հեշտացնում և ինչքան կարող է յարմարացնել և ախորժելի դարձնել կեանքը ապագայում:

Բայց գրտնով չի սահմանափակում մեքենաների ազդեցութիւնը մարդկանց յարաբերութիւնների և մարդկային կարգերի վերաբերմամբ:

Սկզբում իւրաքանչիւր գիւղական ընտանիք ինքը արդիւնաբերում էր այն բոլորը, ինչ իրան պէտք էր ապրուստի համար: Իւրաքանչիւր երկրագործ իւր սեփական հացահատիկներից ախուր էր աղում, և հաց թխում իւր սեփական կանեփից պատրաստում էր հագուստի կտաւ, որը կարում էր նրա համար իւր կինը, վերջապէս ինքն էր փայտ կտրում անտառից՝ և բերում, խրճիթ իր համար: Դրա շնորհիւ իւրաքանչիւր այգալիսի համայնք կատարեալ անկախ էր արտաքին աշխարհից, եթէ մի գեղեցիկ օր ամբողջ աշխարհը բոլորովին խորտակէր և նա (այդ ընտանիքը) մնար կատարեալ ասէս մենակ, այնուամենայնիւ կարիք չէր ունենայ ոչ մի բանի և կշարունակէր ապրել այնպէս, ինչպէս առաջ:

Այժմ որևէ մեծ գործարան տեսնենք: Այստեղ բոլոր բանւորները այնպէս կախում ունեն մէկը միւսից, որ եթէ, օրինակ, մի ինչոր մեքենայ օժանող (смазчикъ) անակնկալ հիւանդանար և նրան ոչ ոք չկարողանար փոխարինել, այդ դէպքում գործարանը կզաղարէր գործելուց և բոլոր բանւորները մէկ

մարդու պատճառով ստիպւած կ'լինէին մի առ ժամանակ թողնել աշխատանքը:

Կամ թէ համեմատենք արհեստը գործարանային արդիւնաբերութեան հետ:

Որևէ առարկայ պատրաստող, իւրաքանչիւր արհեստաւոր, կարող է ասել, որ այդ առարկան իւր սեփական աշխատանքի արդիւնքն է, այն ինչ ներկայիս գործարանի բանւորը պատրաստում է առարկայի որևէ աննշան մասը:

Վերցնենք, օրինակ, գնդասեղների պատրաստելը, որի մասին գրել է դեռ 100 տարի սրանից առաջ Ադամ Սմիտը: «Աշխատանքը, գնդասեղների պատրաստելու ժամանակ, ասում է նա, բաժանւում է 18 առանձին արդիւնաբերութեանց: Մի բանւոր պատրաստում է պղնձեայ լարը, երկրորդը ուղղում է նրան, երրորդը յղկում, չորրորդը մասերի բաժանում, հինգերորդը պատրաստում ծայրերը, սրոնց վրայ պէտք է հագցնել գլխիկները (голова), վեցերորդը, եօթերորդը և ութերորդը աշխատում են գլխիկների վրայ, մի ուրիշն էլ սպիտակացնում է նրանց և վերջապէս նորից մէկն էլ ցցում է գնդասեղները թղթի վերայ: Յստեան չմ մի փոքր գործարան, որի մէջ միայն 10 բանւոր ամենախղճալի գործիքով պատրաստում էին օրեկան 48,000 գնդասեղ՝ այսինքն ամեն մէկը օրեկան 4,800 հատ: Եթէ այդ բանւորներից իւրաքանչիւրն աշխատէր առանձին առանձին, առանց ուրիշի օգնութեան և առանց վարժւած լինելու այդ աշխատանքին, նա, պարզ է չէր կարող պատրաստել, նոյն իսկ գուցէ ոչ մէկը»:

Փրանսիացի տնտեսագէտ Սէյը բերում է ուրիշ, աշխատանքի բաժանման աւելի ապշեցուցիչ օրինակ. — խաղաթղթի արդիւնաբերութիւնը, նա ասում է, որ իւրաքանչիւր խաղաթուղթ ենթարկւում է 70 օպերացիայի: Մի քանի բանւորներ պատրաստում են խաղաթղթի թուղթը, միւսները նրա ներկը, մի քանիսը զրազում են երեք թերթ թուղթ իւրաքանչիւրով, մի քանիսը կազմում է խաղաթուղթը և դարձնում նրանց սեղմիչի որից կազմում է խաղաթուղթերի և դարձնում նրանց սեղմիչի (прессъ) տակ: Մի քանիսը ներկում են խաղաթղթերի հակառակ կողմերը, միւսները սև ներկով կնքում պատկերները, երրորդները նրանց գեղեցկացնում, չորրորդներն արգէն կնքած խաղաթղթերը չորացնում: Իսկ խաղաթղթերի կտրատելը կազմում է սովորական բանւորների գործը. մի քանիսն էլ զբաղ-

ւում են բացառապէս խաղաթղթներն արկղիկները մէջ դասա-  
ւորելով և այլն: Աշխատանքի այդ տեսակ բաժանման նշանա-  
կութիւնը շատ մեծ է: Մենք տեսանք խաղաթղթերի գործարանը,  
որ աշխատում էին 30 բանուոր և նրանք միասին պատրաստում  
էին օրեկան 15,500 խաղաթուղթ, այսինքն իւրաքանչիւրը 500  
հատից աւելի:

Եթէ իւրաքանչիւր բանուոր ստիպւած լինէր ինքը կատա-  
րելու 70 օպերացիան էլ, այն ժամանակ նա պարտաւորւած  
կլինէր նախ՝ շատ տարի կորցնելու այդ գործը սովորելու հա-  
մար և վերջի վերջոյ հաւանական է, որ չէր էլ կարող պատ-  
րաստել նոյն իսկ մէկ օրում երկու խաղաթուղթ: Սակայն շատ  
ժամանակ է անցել այն օրից, որ ապրում էին Սմիտը և Սէյը:  
Արդէն հէնց այն ժամանակ էլ՝ Գնդասեղաների կամ խաղաթղ-  
թերի բանուորները կատարում էին այն աշխատանքի փոքր մա-  
սը միայն, որը հարկաւոր էր դրանց պատրաստութեան համար:  
Այժմ բանուորի աշխատանքն աւելի աստիճանաբար է: Մեքե-  
նաներից մէկը պատրաստում է լարը, միւսը կտրտում դրան,  
երրորդը սրում ծայրերը և այլն: Իսկ մարդը, միայն դարսում  
է նիւթը և ժողովում պատրաստած կամ կտրտած լարերը:  
Այստեղ արդէն մեքենան հարկաւոր է մեքանային, իսկ մարդը  
նրանցից իւրաքանչիւրի գործակցութեամբ կատարում է  
միևնոյն աշխատանքը. բայց նա աւելի է կախւած մեքենայից,  
որովհետև պէտք է յարմարել նրա շարժումին, բարձրացնելով  
կամ ցածրացնելով ձեռները, մօտենալով հեռանալով նրանցից,  
նայելով նրա անիւների շարժման: Մեծ գործարանի մէջ բոլոր  
բանուորները ծառայում են իրրև լրացուցիչ մեքենայի, և բո-  
լորն էլ հաւասարապէս հարկաւոր են նրան:

Բայց ինչպէս գնդասեղի գործարանի Սմիտի ժամանա-  
կակից բանուորը, այնպէս էլ ներկայիս գործարանի բանուորը,  
որն օգտուում է մեքենայից, նայելով պատրաստ գնդասեղի կամ  
խաղաթղթերի վրայ՝ չէ կարող ցոյց տալ, թէ որտեղ է նրա  
աշխատանքը և որտեղ ընկերներին: Էլ աւելի դժւար է նրա հա-  
մար որոշել մի որևէ հսկայական մեքենայի հետ ունեցած յա-  
րաբերութիւնը, որի պատրաստութեան մէջ նա միաժամանակ  
իւր հարիւրաւոր ընկերների հետ և տասնեակ մեքենաների  
օգնութեամբ մասն է ունեցել:

Կարճ է արդեօք որևէ բանուոր պահանջել, որ հազարա-

ւոր բանուորների ընդհանուր աշխատանքի այսինչ արդիւնքը  
կազմի բացառապէս իւր սեփականութիւնը:

Գործարանային արդիւնաբերութեան եղանակը կապում և  
կախման մէջ է դնում մէկը միւսից ոչ միայն մէկ գործարա-  
նի բանուորների: Իւրաքանչիւր գործարան կապւած է այն  
բոլոր գործարանների հետ, որոնցից նա ստանում է կամ հում  
նիւթ և մեքենաներ կամ որոնց զիջում է իւր արդիւնաբերու-  
թիւնը: Այս դեռ ոչինչ: Մինչև անգամ իւրաքանչիւր ազգ կա-  
խումն ունի միւսներից, որոնց հետ փոխանակում է իւր ար-  
դիւնաբերութիւնը, սեանալով նրանցից ուրիշը. ամբողջ բա-  
ղաքակրթւած մարդկութիւնը արդիւնաբերութեան յարաբերու-  
թեան մէջ ներկայանում է իրան մի ամբողջութիւն, որի բաղ-  
կացուցիչ մասերը-տարբեր հասարակութիւններ են սերտ  
կապւած իրար հետ և գտնուում են իրարից կախման մէջ:

Ամբողջ հասարակութեան այդ փոխադարձ կախումն ու-  
նենալը դարգանում է ամենայն օր: Սկզբում ձանապարհների  
պահասութեան և ասպնովութեան բացակայութեան շնորհիւ  
պետութիւնների մէջ եղած հաղորդակցութիւնը շատ դժւա-  
րին էր, ուստի մարդիկ ձգտում էին, որ ամեն մի երկիր  
նոյնիսկ ամեն մի տեղ ինքը արտադրէ այն բոլորը, ինչ հար-  
կաւոր էր իւր բնակիչներին ապրուստի համար: Այժմ էլ ա-  
մեն մի երկրում արդիւնաբերում են միմիայն այն, որին  
նպաստում են տեղական հանգամանքները. մնացած աւարկա-  
նորը ստանում են ուրիշ երկրներից:

Մարդկային զարգացման այս համառօտ պատմութիւնից  
մինք տեսնում ենք, թէ ինչպէս մարդկային ամբողջ կեանքն  
արդիւնաբերութեան եղանակների հետ շարունակ փոփոխու-  
թեան է ենթարկւել: Քանի որ մի երկրում գոյութիւն ունի  
միայն երկրագործութիւնը, քանի որ իւրաքանչիւր համայնք  
միանդամայն կտրւած է մնացած աշխարհից և ունի իւր ա-  
ռանձնայատուկ սովորուիչիւնները, իւր առանձնայատուկ կաղ-  
մութիւնը մինչ այդ, աշխատանքի արդիւնքը կարող է զեռ  
պատկանել առանձին արդիւնաբերողի: Բայց հէնց որ երևան են  
դալիս մեծ գործարաններ—հետևապէս դրանց հետ և երկա-  
թուղիներ՝ ապրանքները տեղափոխելու—մարդիկ սկսում են  
տեղափոխւել մի տեղից մի ուրիշ տեղ, այդ ժամանակ արդէն  
աշխատանքի արտադրութիւնները չեն կարող մէկ բանուորի

սեփականութիւն լինել և ամբողջ աշխարհը ներկայացնում է որպէս մի ամբողջութիւն:

Փիւնականները ապացուցում են, որ նոյնիսկ ընտանիքներին, սեփականութեան, կառավարութեան ձևերը փոփոխուում են աշխատանքի գործիքների և արդիւնաբերութեան եզանակների ազդեցութիւնից: Բայց մենք արդէն գիտենք, որ ճշկէվիւրներին (СТАНКА) վրայ աշխատող մարդիկ պէտք է ունենան այլ կարգեր, քան նրանք, որոնք աշխատում են մեծ գործարաններում, և ահռելի մեքենաների վրայ:

Մարդկային աշխատանքը ամեն ժամանակ ստեղծում է որևէ արդիւնք՝ սեղան, մահուկ և այլն: Այդ արդիւնքը ծախուում է: Բնականաբար հարց է առաջանում, ի՞նչու նրանք ծախուում են այս, և ոչ այլ գնով: Այնուհետև, ինչպէս յայտնի է, միայն մի քանի մարդիկ են հացահատիկ ձեռք բերում, նորից հարց է առաջանում, ինչ եղանակով են դրանից օգտուում հացահատիկներ չարտադրող մարդիկ: Իւր կարգին, որպէսզի սեղան պատրաստեն հարկաւոր է փայտ և գործիքներ: Ի՞նչ եղանակով է փող դառնում այդ գործիքների և փայտի կորուստը ի՞նչու իւրաքանչիւրը ընդունում և աշխատում է նրան ձեռք բերել:

Այդ բոլոր հարցերին պատասխանում է էպոստոստիստերիւնը: Նա ուսուցանում է մեզ արդիվարեութեան օրենքների եւ հարստերիւնների փոխանակութեան մասին: Վերջի ներջոյ, ինչպէս բոլորը, այնպէս էլ այդ օրէնքները ժամանակի ընթացքում փոփոխուում են աշխատանքի գործիքների և արդիւնաբերութեան եզանակների ազդեցութիւնից:



I.

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՒ ՆՐԱ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Միայն մի քանի երկրներում, ինչպէս օրինակ, Հնդկաստանի ստղաւէտ հովիտներում՝ բնութիւնը կիսով չափ տալիս է մարդուն այն բոլոր բերքերը, ինչ որ հարկաւոր է նրան կեանքի ապահովութեան համար: Ագամախնձորը (бабань), հացէ ծառը և արմաւինիները բուսնում են այնտեղ առատութեամբ և գեղեցիկ բերք են տալիս համարեա առանց մարդու աշխատանքի. բացի այդ, տաք կլիմայի պատճառով բնակիչները հազուադէպ են կրում, իսկ ծառերի սաղարթը պաշտպանում է մարդուն անձրևից:

Մնացած բոլոր երկրներում մարդս ստիպւած է բաւականին ջանք գործ գնել իր գոյութիւնը ապահովելու համար և այստեղ նրա գոյութիւնը բացառապէս կախւած է իր աշխատանքից, այն բանից, որ մարդս ինքն է արտադրում իր կենսական մթերքները: Բայց ուշադրութեամբ նայենք մարդկային հասարակութեանը: Չնայած նրա մէջ ամեն բան ձեռք է բերւում աշխատանքով, այնուամենայնիւ աշխատանքի ձևերի մէջ կայ ահադին տարբերութիւն, որը հարթւում է զանազան մարդկանցով: Մենք տեսնում ենք զքսին, որի ամբողջ աշխատանքը կառավարելն է, օրինակ, տւած հրամանների միջոցով գորահանդէսներ կազմել և այլն. այնուհետև տեսնում ենք գեներալներին, որոնք ժամանակն անց են կացնում զինուորական վարժութիւնների, զօրքի գեկավարութեան մէջ. այնուհետև տեսնում ենք նախարարների,

որոնք պաշտօնեաների մասալի օգնութեամբ կառավարում են ամբողջ պետութիւնը: Բացի այդ պատահում ենք արդիւնաբերողների և վաճառականների, որոնք ապրանքները մի տեղից մի օրիշ տեղ են փոխադրում և այդպիսով վաճառականութեան միջոցով նպաստում ապրանքների փոխանակութեանը:

Շատերն էլ դեկավար կամ աշխատող են հանդիսանում այնպիսի աշխատանքներով՝ ինչպէս օրինակ, ջրանցքների, շոտէների, երկաթուղիների անցկացնելն է: Այդ աշխատանքները բոլորի համար օգտաւէտ են և քեզ օգուտ չեն մատակարարում այդ գործով զբաղողներին:

Սակայն վերոյիշեալ աշխատանքի բոլոր ձևերը զբաղեցնում են համեմատաբար քիչ թւով մարդկանց: Մարդկանց մեծամասնութիւնը աշխատում է բնութեան հում նիւթերի արտադրութեան կամ մշակութեան վրայ: Այսպէս, հանքահանները, երկրագործները, ձկնորսները և որսորդները վաստակում և ժողովում են հում նիւթեր միւս բանւորներն էլ գործարաններում և արհեստանոցներում, ջրաղացներում և հացատներում զբաղում են այդ արտադրած հում նիւթերի մշակութեամբ և հասարակութեանը մտակարարում արդէն մշակած մթերքներ: Այդ մթերքները եթէ պատրաստւած են ծախելու համար, կոչւում են ապրանք:

Ապրանքը ծառայում է բաւարարութիւն տալու ոչ միայն այն մարդկանց, որոնք զբաղւած են սովորաբար այդ ապրանքի արտադրութեամբ և մշակութեամբ, այլ և ամբողջ հասարակութեան:

Այդ հասկացողութիւնները հնարաւորութիւն են տալիս մեզ բոլոր աշխատանքները, համապատասխան նրանց զբաղմունքի բաւարարութեան, բաժանել երկու գրուպայաների:

Այն մարդկանց, որոնք զբաղւում են հում նիւթերի արտադրութեամբ և մշակութեամբ, մենք անւանում ենք ապրանք արդիւնարեւոր-բանւորներ: Իոցա կարգին պատկանում են երկրագործները, հանքահանները, որսորդները, արհեստաւորները և գործարանի բանւորները: Միւս մը-

նայածներին, որոնք զբաղւում են որևէ օգտակար աշխատանքով, մենք նրանց անւանում ենք ծառայութիւն մատուցող բանւորներ: Առաջին խմբի բանւորներն ապրանքները կամ տեղափոխում են, կամ լրացնում բժիշկների, տեխնիկների, ուսուցիչների, ուսանողների պարտականութիւնները և այլն: Այն ինչ, երկրորդ խմբի բանւորները իրենք ապրանք չեն արտադրում, այլ սօցիալու համար նրանք ստիպւած են ստանալ արդիւնաբերող բանւորների արդիւնքների մի մասը, լրանց ցոյց տւած ծառայութեան փոխարէն: Ի հարկէ, այդ կարելի է այն դէպքում, երբ ապրանք արդիւնաբերող բանւորների աշխատանքը, այնքան արդիւնարար է, այսինքն այնքան օգտակար առարկաներ է արտադրում, որ աւելի շատ է դուրս գալիս քան հարկաւոր է հէնց այդ բանւորների սեփական սխառ քները լրացնելուն: Միայն դրա շնորհիւ կամայ թէ ակամայ նրանք կարող են իրանց արդիւնաբերած ապրանքի մի մասը տալ այն խմբին, որն առաջարկում է հասարակութեանը ոչ թէ ապրանք, այլ անհատական ծառայութիւն:

II.

Շ Ք Ե Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

Սովորաբար անհերքելի կարծիք է համարւում, որ հարուստների շքեղութիւնը ներկայանում է բանւոր դասակարգի համար իբրև աշխատանքի և բարերարութեան ազբիւր: Պնդում են, որ եթէ հարուստները դադարէին իրանց աղջկերանց և կանանց մետաքս, թաւիչ հագցնելուց, եթէ նրանց բնակարանները չզարգարէին գոյնըգգոյն գորգերով, գեղեցիկ պաստառներով՝ այդ դէպքում բազմաթիւ բանւորներ, որոնք զբաղւում էին այդ առարկաների պատրաստութեամբ, գործ չէին ունենայ, հետևապէս և աշխատանք ու միջոց էլ չէին ունենայ կեանքի ապահովութեան համար:

Իրա համար շատերը հաւատում են այն բանին, որ

հարուստների շքեղութիւնը կերակրում է աղքատներին: Դժբախտօքար ներկայ պայմաններում այդ հայեացքին չափազանց յաճախ են ենթարկւում: Մանրամասնօրէն կանգ առնենք այդ հարցի վրայ:

Մարդիկ որպէս զի ապրեն, պէտք է գործ ածեն միջերջներ՝ ուստի և այսպէս կոչւած բանուոր-արդիւնաբերողները, այսինքն սպրանք արտադրողները, պէտք է պատրաստեն այնքան, որպէսզի բոլորն էլ կարողանան իրանց կարիքներին բաւարարութիւն տալ:

Քաղաքատնտեսութեան ներկայ պայմաններում իւրաքանչիւրն իւր աշխատանքի համար իբրև վարձատրութիւն ստանում է փող, և իւր հերթին տալիս է այդ ուրիշներին, զնեղով նրանց խանութներէից իւր ընտանիքի համար զանազան անհրաժեշտ իրեր:

Շուկայում պահեստներում, մագազիններում և արկղներում դրւած ծախելու համար նշանակւած բոլոր ապրանքները կազմում են բանւորների աշխատանքի արդիւնք. բոլոր ապրանքների ժողովածուն ներկայանում է հասարակութեան բոլոր անդամների աշխատանքի արդիւնք: Երևակայենք այժմ, որ իւրաքանչիւրը տալիս է այդ պահեստներին իւր աշխատանքի արդիւնքի որևէ մասը, այն մասը, որ համապատասխանում է ըստ փողային արժէքի վարձատրութեան օրւայ աշխատանքին:

Այն ժամանակ կերևար, որ շքեղութեան առարկաներ արտադրող բանւորները համարեա իրանց սեփական արտադրութիւնից ոչինչ չեն ստանում, այլ օգտւում են միայն այն առարկաներից, որոնք յայտնի են ընդհանուրի գործածութեան առարկաներ անունով:

Բոլոր սովորական միջերջները, առանց որոնց մարդիկ չեն կարող կառավարւել, օրինակ՝ ուտելիք, հագուստ, բնակարան, սնային և խոհանոցային կահկարասիք, այդ մագազիններում առանձին բաժանմունք կրկազմէին: Այդ բաժանմունքից գործածութեան համար բոլորն էլ կստանային առարկաները միատեսակ, ինչպէս նա, ով ներկայանում է իբրև ապրանքների արտադրող, այնպէս էլ նրանք, ովքեր, հասարակութեանը

ծառայութիւն են մատուցանում: Այդ բաժանմունքը լցւած կլինէր բացառապէս այն բանւորների աշխատանքների արդիւնքներով, որոնք զբաղւում են ընդհանուրի գործածութեան միջերջների արտադրութեամբ: Այդ ապացուցում է, որ նրանց աշխատանքի արդիւնքն այնպէս մեծ է, որ նրանց արտադրածը բաւականանում է ոչ միայն իրենց, այլ և այն բանւորներին, որոնք արտադրում են շքեղութեան իրեր, նոյնպէս և այն բանւորներին որոնք հասարակութեանը ծառայութիւն են մատուցանում:

Շքեղութեան առարկաները մագազիններում կկազմէին առանձին բաժանմունք: Բայց, չնայած այդ բաժանմունքները լցւած կլինէին շքեղութեան առարկաներ արտադրող բանւորների աշխատանքի արտադրութեամբ, այնուամենայնիւ նրանցից կօգտւէին բացառապէս հարուստ մարդիկ, որոնք նոյնիսկ գործ կածէին միևնոյն ժամանակում բոլորին էլ անհրաժեշտ առարկաները, վերցնելով մագազինի առանձին բաժանմունքից միս, հաց և այլն:

Ենթադրենք այժմ, որ շքեղութեան առարկաների պահանջը, հետևապէս, և դրանց արտադրութիւնը միատեսակ կտրւեց: Այդ դէպքում, մինչև այդ համանման առարկաների արտադրութեամբ զբաղւող բոլոր բանւորներն, որպէսզի հնարաւորութիւն ունենային գոյութիւն ունենալ, պէտք է դառնային ընդհանուրի սպառման առարկաների արտադրութեանը: Այժմ իրանց արտադրած առարկաները կտային մագազինի առաջին բաժանմունքը և կմեծացնէին իրանց աշխատանքի արդիւնքով հասարակութեան անհրաժեշտ առարկաների թւական քանակութիւնը: Այսպիսով, իւրաքանչիւրը կարող էր աւելի շատ անհրաժեշտ առարկաներ ստանալ, քան թէ առաջ:

Աշխատենք պարզել այդ մի բանի օրինակով: Մի բալի համար գործածւող կանանց առանձնարանների (туалеты), դահլիճների զարդը, ուտելիղէնները և խմիչքները արժեն, ասենք հազար հարիւ (1100): Այդ համա-

րեա, համապատասխանում է հարիւր հազար սովորական բանւորական օրւայ: Համարեա 330 մարդ ամբողջ տարւայ ընթացքում պէտք է աշխատեն (մօտաւորապէս 300 օր), որպէսզի մի երեկոյեան սպառելու առարկաներ պատրաստեն: Մինչ, այդ շքեղութեան առարկաների արտադրութեամբ զբաղւող բանւորների մեծ մասը ապրում է կարեկցութեան և զգզւած հագուստի մէջ:

Յաճախ բատիտ չիթ գործող ջուհակն իւր երեսններին համար վերնաշապիկ չէ ունենում. հաշիագործը, որը փչացրել է իւր աչքերը ամենանուրը հաշիա գործելով, մեռնում է ծանր հիւանդութիւնից յետոյ, կերակրի պակասութեան պատճառով: Մետաքս և թաւիշ արտադրող բանւորները ձմեռը տաք հագուստ չեն ունենում:

Դերձակները, դերձակուհիները, ծաղկավաճառուհիներն և մագազիններում առևտուր անող կանայք ապրում են համարեա կիսաքաղց: Միևնոյն ժամանակ դրանք հարուստների շքեղութեամբ պէտք է ուրախանան, որովհետև, եթէ չլինէր այդ շոայութիւնը դրանք կմնային առանց մի կտոր հացի: Եթէ միայն, այդ 330 մարդը զբաղւէին տարւայ ընթացքում սովորական չիթ, մանուկի և ուրիշ անհրաժեշտ մթերքների պատրաստութեամբ, դրանց աշխատանքը հնարաւորութիւն կտար, ոչ թէ միմիայն իրանց յարմար և լաւ հագուստ ունենալու, այլ և նրանք այդ մթերքներից կպատրաստէին այնքան, որ Ձ անգամ աւելի կարող էր մարդկանց լաւ հագցնել:

Վերցնենք ուրիշ օրինակ:

Հարուստը իրա համար տուն է շինում, որը իր ամբողջ պատրաստութեամբ արժէ, ենթադրենք, 300,000 ուրբի: Այդ համապատասխանում է միայն մի ընտանիքի համար մի տան շինութեամբ և պատրաստութեամբ զբաղւող 1000 մարդու մի տարւայ աշխատանքին: Ինչքան պարզ, առողջապահական և ընդարձակ տներ կարող էին պատրաստել այդ մարդիկ մի տարւայ ընթացքում:

Մենք պէտք է խոստովանենք, որ շքեղութեան

հասկացողութիւնը դժւար է ճիշտ որոշել: Այն իրերը, որոնք 50 տարի սրանից առաջ համարում էին շքեղութիւն, այժմ, շնորհիւ արդիւնաբերութեան կատարելագործւելուն և հեշտանալուն, դարձել են ընդհանուրի գործածութեան իրեր: Առանց կասկածելու կարելի է ասել, որ խմբային արդիւնաբերութեան ժամանակ շքեղութեան առարկաների անագին քանակութիւնը դառնում է ամենօրեայ գործածութեան առարկայ: Վայրենի մարդուն կարող է թւալ, որ սապոնի գործածութիւնը շոայութիւն է, բանւորների մեծամասնութիւնը, դժբախտաբար համարում է լրագրների և գրքերի ընթերցումը աւելորդ բան, իսկ արհեստաւորները գիտական հեղինակութիւններին նայում են նոյնպէս տնտեսական տեսակէտից: Մենք, իհարկէ, չենք հրաժարւի շքեղութեան մասին մեր ունեցած կարծիքից և կշարունակենք մտածել, որ նա ամեն ժամանակ ծառայել է յօգուտ միայն ոչ շատերի: Ահա և այնտեղ, ուր մեծամասնութիւնը սապոնի և լրագրների ընթերցանութեան կարիքը չի զգում, սապոն եփողները և գրաշարները պէտք է աշխատեն, եթէ բացառիկ չէ, գլխաւորապէս փոքրամասնութեան համար:

Եւ այսպէս մենք տեսնում ենք, որ եթէ բանւորների մի նշանաւոր մասը ստիպւած չլինէր շքեղութեան առարկաներ արդիւնաբերելու, նրանց աշխատանքը կարող էր դառնալ դէպի հասարակութեան սովորական գործածութեան առարկաների արտադրութիւնը, որովհետև այժմ, շնորհիւ մեքենաների կատարելագործման, մարդկային աշխատանքը դարձել է շատ արդիւնաւէտ. այսինքն կարճ ժամանակում արտադրւում է բաւականին օգտակար առարկաներ, որոնք բաւարարութիւն կարող էին տալ ամբողջ հասարակութեան կարիքներին: Աւելի լաւ և աւելի յարմար կեանքը, բոլորի համար կը դառնար աւելի մատչելի: Իւրաքանչիւրը հնարաւորութիւն կունենար գիտական և էստէտիքական կրթութիւն ըստանալու:

III.

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ.

Ներկայ ժամանակում, երբ իւրաքանչիւրը ծախում է իւր աշխատանքը (կամ եթէ աշխատում է իւր հաշիւն աշխատանքի արգիւնքը) և ստացած փողով գնում այն, ինչ որ նրան հարկաւոր է, սովորաբար հարց է առաջանում. ի՞նչ արժէ այս կամ այն ապրանքը: Մենք կխօսենք նոյնպէս նոր գտած արժէքի, բարեկամութեան <sup>1)</sup> գիւտերի, ծառայութեան, առողջութեան, և կեանքի արժէքների մասին: Մենք իւրաքանչիւր քայլափոխում գործ ենք ածում արժէք արտայայտութիւնը, ուստի հարկ է, որ մեզ համար կազմէնք դրա մասին պարզ հասկացողութիւն, թէ ի՞նչ է արտայայտում այդ խօսքը:

Փիլիսոփայ պէտք է լինել հասկանալու այն, ինչ որ մենք տեսնում ենք իւրաքանչիւր օր, ասել է երբեմն ֆրանսիացի մեծ փիլիսոփայ Բուսսօն:

Բայց և այնպէս, ամենից դժւարին է հասկանալ այն, ինչ որ մենք տեսնում ենք իւրաքանչիւր օր, որովհետև մարդս վարժուում է այդ տեսակ երևոյթներին և բոլորովին կանգ չէ առնում դրանց վրայ:

Ներկայ հասարակութեան հարստութիւնը ներփակում է ապրանքների ամենատհուելի գանգաւածի մէջ: Այժմ օրինակով ցոյց տանք, թէ ինչից է կախուած ապրանքների արժէքը:

Եթէ մենք ունենք որևէ առարկայ, հապա կարող ենք նրանից օգտուել Ձեզանակով: Առաջինը գործածութեան, — որ սովորականն է և յատուկ է առարկային. և այդ այն դէպքում, երբ նրան գործ ենք ածում մեր որևէ կարիքը հոգալու. միևս գործածութիւնը — առարկայի բնութեան օտար է և տեղ է գտնում այն ժամանակ,

<sup>1)</sup> Մանօք. Խաթեր համար բան արածի կամ բարեկամութեան արժէքի: Թարգմ.

երբ մենք օգտուում ենք նրանցից, որպէս փոխանակութեան առարկայից, այսինքն երբ գործ չենք ածում նրան, այլ միայն փոխանակում ուրիշ առարկայով: Առաջին դէպքի գործածութիւնը բնական է, իսկ երկրորդինը, չնայած մենք օգտուում ենք, օրինակ՝ կոշիկից, բայց ոչ այնպէս, ինչպէս որ նա պէտք է ծառայէր, ինչպէս որ պատրաստուած էր հագնելու համար, իսկ մենք փոխանակում ենք նրան ուրիշ առարկայով:

Այստեղ բերած գործածութեան (այստորակալն արժէք) և փոխանակութեան (փոխանակակալն արժէք) ժամանակ իրերի մէջ եղած արժէքների տարբերութեանը մասնացոյց է արել դեռ 2200 տարի սրանից ստաջոյն փիլիսոփայ Արիստոտելը: Բայց այն ժամանակ մըթերքների մեծամասնութիւնը արտադրուում էր սեփական գործածութեան համար և միայն մնացածը՝ աւելորդը հանուում վաճառքի: Իսկ այժմ բոլորն արտադրուում է բացառապէս փոխանակութեան համար և այդ կազմում է կապիտալիստական արդիւնաբերութեան յսկանիշը:

Իւրաքանչիւր առարկայ արտադրուած փոխանակութեան նպատակով, պէտք է որևէ մէկին պէտք լինի, և բաւարարութիւն տայ որևէ կարիքի: Չէ որ, ոչ ոք չի վերցնի այն, ինչ իրան յատկապէս հարկաւոր չէ, ուստի ամեն մի ապրանք պէտք է ունենայ սպառողական արժէք: Միայն օգտակար առարկան կարող է դառնալ ապրանք:

Բոլոր սպառողական արժէք ունեցող առարկաները կարող են դառնալ ապրանք: Լոյսը, օդը, գետերի ջուրը ծառայում են մարդկանց կարիքներին բաւարարութիւն տալու, բայց նրանք չեն ներկայանում որպէս ապրանք: Այդ բոլորը պատահում են այնպիսի քանակութեամբ, որ իւրաքանչիւրին առանց որևէ աշխատանքի և ջանքի մատչելի է: Բայց երբ վերցնում ենք ջուրը և նրան բերում քաղաք, այսինքն՝ այդպիսով նրան մատակարարելու համար, մենք գործ ենք դնում որոշ աշխատանք, այդ դէպքում արգէն այլ կերպ պէտք է գնահատենք այդ ջուրը, որովհետև, բացի բնական գործածութեան արժէքից,

Ղուրը շնորհիւ աշխատանքի ստացել է մի ուշիշ՝ փոխանակական—արժէք և դարձել է ապրանք։ Ուրեմն աշխատանքը, օգտակար աշխատանքը փոխանակական արժէքի առաջին պայմանն է։

Որպէսզի այդ աւելի լաւ պարզենք, ամենից յարմարն է վերցնենք մի հասարակ դէպք, այսինքն, չլիշենք փողի մասին, այլ թողնենք, որ այդ վաճառքը կատարւի հասարակ փոխանակութեան միջոցով՝ ապրանքի հետ։

Չուրհակը դործել է 20 արշին կտաւ, որն իրան հարկաւոր չէ, դերձակը կարել է հագուստ, որը նոյնպէս իրան հարկաւոր չէ։ Բայց դրա փոխարէն Չուրհակը կարիք է զգում հագուստի իսկ դերձակը կտաւի։ Եւ անհարկ փոխանակում են իրանց արտադրութիւնները, համաձայնելով, որ 20 արշին կտաւը ունի այնպիսի արժէք, որպիսին հագուստը։

Չուրհակը շարունակում է աշխատել և կտաւը փոխանակել տարբեր ապրանքների հետ. այսպէս 20 արշին կտաւով նա գնում է սեղան։ այնուհետեւ մի այդպիսի կտաւի քանակութեամբ էլ գնում է 100 գրվանքայ հաց, 40 շափ (мѣра) ածուխ, և վերջապէս գիրք։

Իւրաքանչիւր փոխանակութեան ժամանակ փոխանակեող ապրանքների արժէքները պէտք է հաւասար լինեն իրար, այսպէս օրինակ. 20 արշին կտաւի արժէքը հաւասար է կամ հագուստի, կամ սեղանի, կամ 100 գրվանքայ հացի, կամ 40 շափ ածուխի և վերջապէս կամ գրքի արժէքին։ Այստեղից ստացւում է այսպիսի հաշիւ՝

20	արշին	կտաւը	արժէ	այնքան,	որքան	1	ձեռք	հագուստը։
20	»	»	»	»	»	1	սեղանը։	
20	»	»	»	»	»	100	գր. հացը։	
20	»	»	»	»	»	40	շափ ածուխը։	
20	»	»	»	»	»	1	գիրքը։	

Այդ բոլոր արտադրութիւնները ներկայանում են իբրև օգտակար և մարդկայն գանազան կարիքների բաւարարութիւն տուող առարկաներ և չնայած նրանց նշանակութիւնը տարբեր է, ինչպէս տարբեր է բնութիւ-

նից տրւած այն նիւթը, որից պատրաստւած են նրանք, բայց և այնպէս ներկայացնում են մարդկային աշխատանքի արդիւնաբերութեան մարմնացումն։

Այդ առարկաների տարբեր նշանակութիւնն է, որ հնաբաւոր է դարձնում փոխանակութիւնը, որովհետեւ ոչ ոք չէր սկսի փոխանակել հագուստը հագուստի հետ, կտաւը, կտաւի հետ. միայն աշխատանքի գանազանակերպ ինքնուրոյն ձևերի արտադրութիւնները կարող են լինել փոխանակող։

Նայենք մանրակրկիտ կերպով ապրանքներին և կրհամոզւենք, որ կտաւի մէջ ամփոփւում է Չուրհակի աշխատանքը, որը երկրագործի աշխատանքով ձեռք բերւած կանեփը դարձրեց գործւածք. մենք կհամոզւենք, որ զգեստի մէջ ամփոփւում է դերձակի և Չուրհակի աշխատանքով ձեռք բերւած բուրդ, ինչպէս որ սեղանի մէջ կայ հիւսնի, փայտահատի աշխատանքից գատ նոյնպէս և փայտ։ Հացի մէջ մենք կգտնենք հացթուխի, ջրադացպանի աշխատանք և երկրագործի աշխատանքով ձեռք բերւած հաճար։ Ածուխի մէջ գտնւում է ածխահանի աշխատանքը, գրքի մէջ նրա գրող հեղինակի, թղթի գործարանի բանուորի, գրաշարի և կազմարարի աշխատանքը։

Աշխատանքի այստեղ թւած բոլոր ձևերն ականաւոր կերպով տարբերւում են մէկը միւսից. հիւսնը, ածխահանը, հեղինակին իրանց աշխատանքն ունին, բայց նրանց մէջ ընդհանուրն այն է, որ այդ բոլոր աշխատանքներն էլ միակերպ պահանջում են մարդուց մարդկային աշխատանքի ոյժ։ Որքան աշխատանքը հեշտ և հասարակ է, այնքան քիչ ժամանակ է հարկաւոր մարդուն սովորելու այն. որքան դժւար է—այնքան շատ։

Եթէ գտնանք մենք այն ժամանակներին, երբ երկրագործը ինքն էր աղում իւր հացահատիկները երկանքով և ինքն էր հաց թխում իւր ալիւրից, այն ժամանակ մենք կտեսնենք, որ կանեփը մանուկ էին տանը և ոչ թէ գործարանում, որ հագուստները կարում էին նոյնպէս տանը։ Հետեապէս այն ժամանակուայ

միևնոյն մարդը միաժամանակ երկրագործ, ջրաղացպան, հացթուխ էր. միևնոյն մարդը կատարել է սկզբում երկրագործի, յետոյ ջուլհակի և վերջապէս դերձակի աշխատանքը: Ինքնըստինքեան հասկանալի է, որ միևնոյն մարդն անտառում փայտ է կտրել և ինքն էլ շինել է իրա համար իրճիթ, հետևապէս նա է եղել միևնոյն ժամանակ և փայտահատ, ատաղձագործ և հիւսն: Մի խօսքով, այն ժամանակներում միևնոյն մարդը կատարել է տարբեր աշխատանքներ, որոնք այժմ թւում են մեզ իրար կատարելապէս աննպատակայարմար: Միայն գրանից, որ միևնոյն մարդը կարողութիւն է ունեցել կատարելու այդքան զանազանակերպ աշխատանքներ, պարզ է, որ այդ բոլոր աշխատանքները, ոչ այլ ինչ են, եթէ ոչ միևնոյն մարդու աշխատանքի ոյժի գործադրութիւն:

Մեր բոլոր թւած ապրանքների, կտաւի, հագուստի, սեղանի մէջ գտնւում է մարդկային միևնոյն աշխատանքը:

Այդ տարբեր ապրանքների մէջ եղած տարբերութիւնը կայանում է նրանց վրայ գործ դրած միևնոյն աշխատանքի քանակութեան մէջ. որպէսզի սեղան պատրաստենք, հարկաւոր է 20 անգամ աւելի աշխատանք քան մի արշին կտաւ գործելու համար, միւս կողմից եթէ 20 արշին կտաւ պատրաստելու համար 20 անգամ աւելի աշխատանք է պահանջում, քան մէկ արշին պատրաստելու և այլն: Եթէ ես ասեմ, 20 արշին կտաւը արժէ այնքան, ինչքան մէկ սեղանն, այդ նշանակումէ, սեղանը պատրաստելու համար հարկաւոր է գործ դնել այնպիսի ոյժ, այնքան մարդկային աշխատանք, ինչքան հարկաւոր է 20 արշին կտաւի պատրաստութեան համար 1): Թէ հիւսնի աշխատանքը տարբերում է ջուլհա-

1) Մանօր. Յայտնի է, որ իրար հետ կարելի է համեմատել միմիայն համասեռ առարկաները: Եթէ միմեանց հետ համեմատենք այնպիսի տարբեր առարկաներ, ինչպէս կտաւը և գիրքն է, այդ կարելի է այն դէպքում, երբ համեմատենք միայն այն, ինչ որ նրանց մէջ ընդհանուր է, այսինքն՝ նրանց մէջ ներփակած մարդկային աշխատանքը:

կի աշխատանքից, այդ մեզ համար առ այժմ կարևոր չէ, միայն զիտենք, որ այդ երկու աշխատանքներն էլ միակերպ պահանջում են մարդկային աշխատանքի գործադրութիւն և դրա հիմամբ համեմատում ենք այդ աշխատանքով պատրաստած առարկաները:

Այսպիսով փոխանակական արժէքի հիմք, որին տիրապետում են բոլոր ապրանքները, ծառայում է նրանց մէջ ներփակած մարդկային աշխատանքը:

Բոլոր ապրանքները, ոչ միայն ընդհանրապէս տիրապետում են մի փոխանակական արժէքի, այլ դրա (փոխանակական արժէքի) որևէ որոշ քանակութեան: Հէնց այդ է բանը, որ մի ապրանք տիրապետում է աւելի շատ, միւսը աւելի քիչ արժէքի: Քանի որ փոխանակական արժէքի հիմք ներկայանում է աշխատանքը՝ ապա այն ապրանքները, որոնք համեմատաբար աւելի շատ կամ աւելի քիչ արժէք ունեն՝ պէտք է ներփակեն իրանց մէջ մարդկային աշխատանքի շատ կամ քիչ քանակութիւն:

Ի՞նչով է չափւում աշխատանքը: Աշխատանքը չափւում է առարկայի պատրաստութեան վրայ գործ դրած ժամանակով: Այսպիսով կարելի է որոշել, թէ քանի ժամայ աշխատանք է պարունակում ջուլհակի կտաւի և քանի ժամայ դերձակի հագուստի մէջ: Ինչքան շատ է ջուլհակի աշխատանքը, այնքան տարբեր է դերձակի աշխատանքից. երկրագործի աշխատանքն աւելի հեշտութեամբ կարելի է սովորել, քան գրողի, կամ հեշտութեամբ կարելի է սովորել, քան գրողի, կամ գիտնականի աշխատանքը: Որպէսզի դառնանք ջուլհակ կամ հիւսն, հարկաւոր է այդ արհեստը սովորելու համար որոշ ժամանակ: Իրա համար ջուլհակի կամ հիւսնի աշխատանքի իւրաքանչիւր ժամայ մէջ գտնւում է այն ժամանակի մի մասը, որը նա կորցրել է այդ արհեստն ուսումնասիրելու համար. նշանակում է հիւսնի աշխատանքի մի մասը իսկապէս բարդւած է, քան թէ գիւղացի մշակինը, որը ոչ մի կարիք չէ զգացել իր գործը սովորելու: Այդ տարբերութիւնն աւելի կպարզւի, եթէ վերցնենք ուսումնականի աշխատանքը: Վերջի-

նրա կորցրել է ամբողջ տարիներ կրթութիւն ձեռք բերելու, այնուհետև զիրք գրելու համար ստիպւած է եղել կորցնելու ամբողջ ամիսներ, մասնագիտօրէն կարգաւորելու առարկայի ուսումնասիրութիւնը. նոյն իսկ հէնց գրելը պահանջում է մի քանի օրւայ աշխատանք: Այդ ոչ շատ ժամերի մէջ մտնում է զբաղմունքը սովորելու համար սկզբում կորցրած բոլոր ժամերը: Ուստի գիտնականի աշխատանքի մի ժամը հաւասար է, կասենք, սովորական մարդկային աշխատանքի 10 ժամին:

Մենք պէտք է այժմ ուշադրութիւն դարձնենք այն աշխատանքի վրայ, որը կոչւում է որակական և այն բանի, թէ նա ինչով է տարբերւում սովորական աշխատանքից: Մի աշխատանք, որը կարող է կատարել ամենայն մի առողջ մարդու ձեռքով առանց նախնական պատրաստութեան, կոչւում է սովորական: Միւս ֆագած շատ կամ քիչ տեղութեամբ ուսուցում պահանջող աշխատանքները կոչւում են բարձրագոյն կամ որակական: Բարձրագոյն աշխատանքը միևնոյն ժամանակ արտադրում է աւելի բարձր փոխանակական արժէք, քան սովորական աշխատանքը: Մենք այդ կարող ենք տեսնել օրինակով:

Ենթադրենք մէկին յանձնւած է պատրաստել մի ինչ որ շատ բարդ գործիք. մի շարք անյաջող փորձերից՝ 3 տարւայ աշխատանքից յետոյ, վերջապէս յաջողւում է ի կատար ածել այդ պատւէրը: Այդպիսի դէպքում մենք վստահութեամբ կարող ենք պնդել, որ այդ գործիքում գտնւում է երեք տարւայ աշխատանքի ժամանակ, հետևապէս ունի 3 տարւայ աշխատանքի արժէք:

Եթէ փականագործի արհեստանոցի աշակերտին հարկաւոր է 3 տարի սովորելու, որից յետոյ կարողանայ շինել կողպէք, այդ դէպքում թւում է, որ նա իրաւունք ունի ասելու, որ իւր պատրաստած կողպէքը պարունակում է 3 տարւայ աշխատանք: Բայց մեր աշակերտը չէ բաւականանում մէկ կողպէք պատրաստելով, այլ շարունակ շինում է նորերը: Ենթադրենք, որ մեր փականագործը շնորհիւ 3 տարւայ ուսանելուն հասել է մին-

չև այնտեղ, որ կարող է պատրաստել կէս օրում մէկ կողպէք: Այս դէպքում չէ կարելի ասել, որ նրա պատրաստած առաջին կողպէքի մէջ գտնւում է այն 3 տարւայ աշխատանքը, որը գործ է դրել սովորելու համար: Իսկ միւս կողպէքների մէջ ոչինչ չկայ, բացի մէկ կողպէք պատրաստելու համար (կէս օր) աշխատանքի անհրաժեշտ ժամանակից: Ընդհակառակը, կողպէքներից իւրաքանչիւրի մէջ, բացի մէկ կողպէք պատրաստելու անհրաժեշտ ժամանակից, գտնւում է և մասնիկներն այն ժամանակի, որը գործադրել է նա փականագործութիւնը սովորելու: Իսկ թէ ինչ մասնիկներ են այդ, դժւար է որոշել, որովհետև յայտնի չէ, թէ քանի կողպէք է պատրաստել մեր փականագործն իւր կեանքի ընթացքում. մենք կարող ենք միայն անորոշ ասել, որ մի յայտնի մասնիկ անպայման պէտք է լինի: Այսպիսով կողպէքի մէջ, որը պահանջում է իր արտադրութեան համար, օրինակ՝ 6 ժամ, պարունակում է նորից ժամանակի մէկ աւելորդ մասնիկ. ենթադրենք—1 ժամ, որը 6-ի հետ կազմում է 7 ժամ: Բայց փականագործն իւր աշխատանքի ժամերի տեղութեան ընթացքում կարող է պատրաստել աւելին, քան միևնոյն 6 ժամում հասարակ բանւորը, որը նախնական պատրաստութեան համար ժամանակ չէ կորցրել:

Այսպիսով համա-մարդկային աշխատանքի տարբեր տեսակների քանակութիւնը կարելի է շատացնել կամ քչացնել: Ահա յատկապէս հէնց դրա համար սովորական համա-մարդկային աշխատանքի քանակութիւնը սահմանափակում է ապրանքի մէջ և կազմում արդիւնքի փոխանակական արժէքը: Այդ արժէքը չափում են ժամանակով:

Ենթադրենք այժմ, որ մեր ջուլհակը 20 արշին կտաւ գործելու ժամանակ հանգստանում է և դրա պատճառով աշխատանքը վերջացնում սովորականից 2 անգամ շատ ժամանակում: Սակայն եթէ նա պահանջէր դրա համար դերձակից 2 զգեստ, պարզ է, կստանար այսպիսի պատասխան. «Ինձ համար միևնոյն է, թէ քա-

նի ժամ ես կորցրել այդ աշխատանքի համար. ես գիտեմ, որ սովորաբար անընդհատ աշխատելով կարելի է վերջացնել այդ գործն ասքան ժամանակում, ուստի ըստ 20 արշին կտան ունի այնքան արժէք, եթէ որ նոյնիսկ պատրաստած լինէր այսքան ժամանակում: Իմ բանը չէ, թէ դու ըստ ծուլութեան շնորհիւ 2 անգամ աւելի երկար ես աշխատել»:

Ենթադրենք, ընդհակառակ մեր ջուլհակը աշխատում է երկու, երեք անգամ աւելի եռանդով հետեւապէս 20 արշին կտաւը կարող է գործել, ասենք երեք քառորդում այն ժամանակէլ, որը նրան սկզբում հարկաւոր էր կատարելու այդ աշխատանքը: Հարց է առջանում. արդեօք այդ 20 արշին կտաւի մէջ աւելի չէ ներփակուում բանւորական համա-մարդկային աշխատանքի ժամանակը: Չպէ՛տքէ արդեօք, մեր ջուլհակն իւր կտաւը էժան ծախի: Ո՛չ, նա պէ՛տք է կշռադատի այսպէս, «Եթէ ես ծուլանալով պէ՛տք է դանդաղ աշխատեմ, ահաւասիկ ոչ ոք հաշւի մէջ չի առնում, որ ես այդ մի կտոր կտաւի արտադրութեան համար կորցրել եմ շատ ժամանակ, քան հարկաւոր է. ընդհակառակն ինձ կասեն, որ սովորաբար այդ տեսակ կտորը գործուում է աւելի քիչ ժամանակէլ ընթացքում: Ես վարձատրութիւն կըստանամ հետեւապէս աւելի կարճ ժամանակէլ համա-մարդկային միջակ աշխատանքի համար: Իսկ այժմ, երբ շնորհիւ ջանքի և լարած գրութեան ինձ յաջողել է միւս բանւորների միևնոյն ժամանակէլ ընթացքում պատրաստածից աւելի շատ պատրաստել, ուստի մի կտոր կտաւը պէ՛տք է գնահատել այնպէս, ինչպէս սովորաբար այսինքն իբր թէ նրա վրայ գործ է գրւած բան որական ժամանակի սովորական քանակութիւն: Նշանակում է, չնայած այն բանին, որ ես աշխատել եմ աւելի քիչ ժամանակ, ինձ վարձատրում են այնպէս, ինչպէս սովորաբար»: Մեր ջուլհակը կատարելապէս իրաւունք ունի, որովհետև հարցը դրանում չէ, թէ նրան ժամանակ է գործ գնում իւրաքանչիւր առանձին անհատ որոշ քանակութեամբ անընդհատ պատրաստելու համար: Ապրանքի

փոխանակական արժէքն որոշուում է, ոչ թէ այն ժամանակով, որը գործադրուում է առանձին անհատ, այլ այն, որը գործ է գնում իւրաքանչիւր միջին թւով, միջակ աշխատասիրութեան և տոկոսութեան տէր մարդը: Սուրբ բացառութիւնների մասին չէ և ոչ էլ առանձին անհատների, այլ ընդհանրապէս բոլորի, և դրա համար այն ժամանակը, որը անհրաժեշտ է միջին քով տուած ապրանքը պատրաստելու, կոչուում է «հսկրա-անհրաժեշտ ժամանակ ապրանքի արտադրութեան համար»:

Հարկաւոր է նորից ուշադրութիւն դարձնել, որ սեղանի, կտաւի, և միւս մնացած բոլոր ապրանքների պատրաստելու անհրաժեշտ ժամանակը կախւած է ոչ միայն բանւորների տոկոսութիւնից, այլ նոյնպէս-որն ամենազլխաւորն է, աշխատանքի գործիքների, մեքէնան-ծիքները կապւած են հասարակութեան ընդհանուր կեցութեան հետ և կախւած չէ առանձին անհատների կամքից:

Գիւղացին ձեռքի սղոցով սղոցելով փայտն, իւր աշխատանքի համար աւելի շատ ժամանակ է կորցնում, քան հիւսնը, որը օգտուում է շոգէմեքենայից, ուստի գիւղացին պէ՛տք է աւելի շատ աշխատի սեղան պատրաստելու համար, քան հիւսն: Գիւղական ջուլհակն աւելի երկար է աշխատում մի կտոր կտաւի վրայ, քան թէ այն ջուլհակը, որը աշխատում է մեքենայի օգնութեամբ: Ձեռքի աշխատանքին յարմարեղ գրաշարն աւելի շատ ժամանակ է կորցնում, քան նա, որը ունի շոգէմեքենայ: Հետեւապէս, ինչքան աւելի կատարեալ լինեն այն գործիքները, որոնցից օգտուում են աշխատանքի ժամանակ, այնքան աւելի արդիւնաւէտ կլինի աշխատանքը — ուրիշ խօսքով, այնքան քիչ աշխատանք կգանւի իւրաքանչիւր առարկայի մէջ: Այն ժամանակն, որը հարկաւոր է որոշ ժամանակում որոշ քանակութեան ապրանք արտադրելու, աշխատանքի գործիքների արդիւնաւէտ տարածւած զէպքում, կոչուում է հսկրա-անհրաժեշտ ժամանակ: Այն մասնակցի, երբ հարմար է

ՀԱՄԱՐ



ընդհանուրի գործածութիւն դարձած կլինեն աշխատանքի նոր և աւելի լաւ գործիքներն, մի խօսքով, երբ հասարակութիւնը հնարաւորութիւն կատանայ ապրանքներն աւելի կարճ ժամանակում արդիւնաբերելու, քան թէ առաջ էր, — այդ մօտենտից սկսած, այն ժամանակի քանակութիւնն, որը սկզբում անհրաժեշտ էր այս կամ այն ապրանքի արդիւնաբերութեան համար, կդատարի հանրա-անհրաժեշտ ժամանակ լինելուց: Այս կամ այն ապրանքների արտադրութեան ժամանակ հանրա-անհրաժեշտ արդիւնաբերութեան աւելի կատարելագործւած գործիքների ժամանակ, արդէն այլ կլինի:

Ենթադրենք, որ հիւսող մեքենան կարող է մի ժամում գործել այնքան, կտաւ, որքան մի ամբողջ օրւայ ընթացքում ձեռքով կգործի շուրհակը: Այդ դէպքում վերջինիս պէտք է նայեն իբրև ծոյլ բանւորի վրայ և նրա ամբողջ օրւայ աշխատանքը կգնահատեն այնպէս, ինչպէս գործող մեքենայի մէկ ժամւայ աշխատանքը: Ի՞նչու: Որովհետև ամբողջ հասարակութեան մէջ տիրում են արդիւնաբերութեան այնպիսի պայմաններ, որոնք աշխատանքի նոր գործիքների, միջին եռանդի և միջին տոկոսնութեան ժամանակ պահանջում են միայն մի ժամում կատարել այնպիսի աշխատանք, որի վրայ ձեռքով աշխատող շուրհակը կկորցնէր մի ամբողջ օր:

Բայց որովհետև աշխատանքի գործիքները, մեքենաները և այլն աստիճանաբար կատարելագործւում են, ուստի և իւրաքանչիւր ապրանքի փոխանակական արժէքը չէ մնում միևնոյնը ամենայն ժամանակ, այլ աստիճանաբար ցածրանում է, որովհետև ապրանքների արժէքը կախած է նրա արդիւնաբերութեան համար գործադրած հանրա-անհրաժեշտ ժամանակից: Իսկ այդ ժամանակը կրճատւում է մեքենաների կատարելագործմամբ: Ուստի, նորից կրկնում ենք որ խօսքը ոչ թէ այն բանւորական ժամանակի մասին է, որ այս կամ այն բանւորը կորցրել է իրականութեան մէջ, այլ հանրա-անհրաժեշտ այն ժամանակի, որը հարկաւոր է ապրանքների արդիւնաբերութեան համար աշխատանքի

ըլ լաւ գործածութեան ժամանակ: Այսպիսով կարելի է ասել, որ աշխատանքի ամենալաւ գործիքների գործածութեան ժամանակ ապրանքի արդիւնաբերութեան անհրաժեշտ ժամանակը յատկապէս է հանրա-անհրաժեշտ ժամանակ, որով և որոշւում է ապրանքի փոխանակական արժէքը:

Բայց մէկ հարց էլ կայ, որի վրայ պէտք է ուշադրութիւն դարձնել:

Իւրաքանչիւր ապրանք ներկայանում է առարկայ, որ և բաւարարութիւն է տալիս մեր որևէ կարիքին: Անօգուտ առարկան ոչ ոքին հարկաւոր չէ և հէնց այդ պատճառով էլ այդպիսի առարկան չէ կարող ապրանք դառնալ: Առարկայի արդիւնաբերութեան համար վատնած աշխատանքն, որն իր անօգտակարութեան պատճառով չի կարող ապրանք դառնալ, և անօգուտ և գուր աշխատանք: Այդ դէպքում վատնած բանւորական ժամանակը չէ կարող հանրա-անհրաժեշտ բանւորական ժամանակ լինել, և առարկան, որի վրայ դրած է այդ աշխատանքը՝ չի ունենայ ոչ մի փոխանակական արժէք:

Հիմա մենք պէտք է որոշենք, որ գոյութիւն ունեն ոչ միայն այնպիսի առարկաներ, որոնք ոչ մի փոխանակական արժէք չունեն, և չունեն, որովհետև նրանց ոչ ոք չի կամենայ ունենալ, հետևաբար և փոխանակել. այլև պատահում են էութեամբ շատ օգտակար և անհրաժեշտ առարկաներ որոնք դառնում են անօգուտ և անպէտք, քանի որ այդ ապրանքների պահանջն լիովին բաւարարութիւն է տրւած և ոչ ոք չի կամենում նրանց վերցնել: Սեղանը, օրինակ ոչ միայն օգտակար և պիտանի առարկայ է, այլ և պարզապէս տան գործածութեան համար անհրաժեշտ: Վստահութեամբ կարելի է ասել, որ հազար ընտանիք կամեցել է երկու-երկու, երեք-երեք, կամ չորս-չորս սեղան աւելի ունենալ, քան ունեն այժմ: Ենթադրենք, մեր հիւսներն էլ պատրաստել են այնքան սեղաններ, որ իւրաքանչիւր ընտանիքի ընկնում է հինգ հարիւրական սեղան աւելի քան այժմ: Իւրաքանչիւրի համար պարզ է,

որ ոչ մի ընտանիք այդպիսի քանակութեամբ սեղաններ չի ընդունի, նոյն իսկ ծախելու համար.— իսկ գնելու մասին խօսք անգամ չի կարող լինել, — որովհետև չեն խմանայ ուր տան դրանց: Ենթադրենք, հիւաներն այնուամենայնիւ ասացին, «Մենք աշխատել ենք այդ սեղանների վրայ ամենալաւ գործիքների օգնութեամբ, միջակ եռանդով և տոկոսնութեամբ, ուստի մենք պահանջում ենք, որ հասարակութիւնը գնէր մեզանից այդ, ըստ նրանց փոխանակական իսկական արժէքի»: Ինչ պատասխանել հիւաներին: Ահա ինչ. «Եթէ դուք իւրաքանչիւր ընտանիքի համար պատրաստէք երկու, ամենաշատը — երեք սեղան, մենք դրա համար երախտագէտ կլինէինք, որ դուք ձեր աշխատանքով հասարակութեան կարիքներին բաւարարութիւն էք տւել: Իւրաքանչիւր ընտանիքի համար երկու սեղանի արտօդրութեան վրայ գործադրած ժամանակը մենք կընդունէինք, իբրև յօժարութեամբ յօգուտ հասարակութեան գործադրած, հետևապէս հանրա-անհրաժեշտ բանւորական ժամանակ: Իսկ այժմ մենք ի՞նչ անենք ձեր բոլոր սեղանները: Նրանց նոյնիսկ պաշարի համար պահելն անկարելի է, որովհետև այդպիսի մագազիններ չկան: Ձեր պատրաստած իւրաքանչիւր 50 սեղանից — առնւազն 47 աւելորդ է, հետևապէս անօգուտ և անպէտք: Ինչո՞ւ էք դուր տեղըն այդքան աշխատանք թափել և այդքան անօգուտ գործ պատրաստել»:

Մտաւորապէս այդպէս կլինէր մեր պատասխանը հիւաներին և բոլորն էլ կհամաձայնէին մեզ հետ այն բանում, որ հիւաները կատարել են մի անօգուտ աշխատանք: Հետևապէս իւրաքանչիւր ընտանիքի համար պատրաստած 47 սեղանի վրայ գործ դրած աշխատանքըն անօգուտ է և ընդհակառակը, այն աշխատանքն, որը գործադրւած է իւրաքանչիւր ընտանիքի երեք սեղանի վրայ, օգտաւէտ է: Անօգուտ աշխատանքը հանրա-անհրաժեշտ աշխատանք չէ և ուստի փոխանակական արժէք չէ ստեղծում:

Ենթադրենք 50 սեղան պատրաստելու համար հարկաւոր է 50 բանւորական օր, այսինքն մէկ սեղան պատ-

րաստելու համար մէկ օրւայ աշխատանք: Իւրաքանչիւր ընտանիքի համար 50 սեղան պատրաստելու դէպքում, այսինքն 50 բանւորական օրերից 47-ը անպէտք է և ներկայացնում է անօգուտ աշխատանք: Դրա համար 50 սեղանի մէջ, որոնց մասին է խօսքը, գտնւում է միմիայն հանրա-անհրաժեշտ աշխատանքի երեք և 47 էլ անօգուտ օր:

Որովհետև հանրա-անհրաժեշտ աշխատանքն է, որ ստեղծում է արժէք, ապա ուրեմն մեր 50 սեղանի մէջ էլ ներփակւում է միայն արժէքի այնպիսի քանակութիւն, ինչպէս եթէ պատրաստ էին իւրաքանչիւր ընտանիքի համար 3 սեղան: Թող հիւաներն այրեն իւրաքանչիւր 50 սեղանից 47-ը — նրանք կստանան մնացած 3 սեղանի համար իրանց բոլոր արժէքն, իսկ այժմ 50 սեղանի համար կստանան այնքան, որքան 3 սեղանի:

Եթէ 50 սեղանն արժէ այնքան, որքան 3 սեղանը, ապա որքան պէտք է արժենայ այդ 50 սեղանից մէկը: 50 սեղանը հաւասար է 3 օրւայ աշխատանքի, հետևապէս մէկ սեղանը  $\frac{3}{50}$  բանւորական օրւայ:

Նշանակում է, մեր օրինակի մէջ իւրաքանչիւր առանձին սեղանի արժէքը կախւած է ոչ միայն հանրա-անհրաժեշտ ժամանակից, որը գործ է դրւել աշխատանքի ամենալաւ գործիքների, միջին տոկոսնութեան և միջին աշխատասիրութեան ժամանակ, այլ միևնոյն ժամանակ պէտք է ուշադրութիւն դարձնել այն բանի վրայ, թէ ճիշտ է գործադրւած այդ բանւորական ժամանակը հասարակութեան անհրաժեշտ պիտոյքներին բաւարարութիւն տալու համար: Եթէ չպահանջւէր ժամանակի այնպիսի քանակութիւն, որպիսին գործադրւած է, այդ դէպքում կստացւէր ապարդիւն աշխատանք, որը չէր ստեղծի ոչ մի արժէք:

Այն, ինչ որ ասացինք մենք ապրանքների արժէքների մասին, կարելի է վերագրել և ծառայութեան արժէքներին:

Ծառայութեան արժէքը նոյնպէս կախւած է նրան լրացնելու անհրաժեշտ ժամանակից: Հարկաւոր է միայն

ուշադրութիւն դարձնել այն բանին, որ որոշ ծառայութեան ամենակատարեալ կերպով լրացնելը կարող է տեւել շատ կարճ ժամանակ և պահանջել մեծ ջանք, բացի դրանից, նախ քան այդ պէտք է կորցնել շատ աշխատանք, որպէսզի այդպիսի ծառայութիւն մատուցանելը սովորւի: Ուստի որոշ ծառայութիւն կատարելու առթիւ կորցրած ժամանակին պէտք է աւելացնել աշխատանքի նախապատրաստութեան և նախնական կրթութեան համար գործադրած ժամանակը: Այդ կարելի է տեսնել ի թիւս այլոց, բժշկի ցոյց տւած ծառայութեան օրինակից. բժշկի այցելութիւնը տևում է կարճ ժամանակի համար, որ նա կորցրել է բժշկութիւնը սովորելիս: Բժշկի ծառայութեան արժէքը կարելի է հաշուել հետևեալ կերպով. բժշկութիւն սովորելու համար պէտք է գործադրւի 6 տարի, որպէսզի յետոյ գործածւի, ենթադրենք 30 տարի. դրա համար գործադրութեան իւրաքանչիւր 5 տարուն պէտք է աւելացնել ուսման մէկ տարին: Հետևապէս բժշկական աշխատանքի 5 տարին ներկայացնում է բժշկի գործունէութեան 6 տարւայ սովորական աշխատանքի արժէք, միացած կեանքի համար գործադրող այն սովորական բիսկի հետ, որ յատուկ է բժշկի գործունէութեանը:

Եթէ մեզ մօտ եւրոպայում լինէր միմիայն մի դրպրոց, որի մէջ սովորեցնէին բժշկութիւն, ապա այդ գիտութիւնը միացած կլինէր մեծ դժւարութիւնների և շատ ժամանակի կորուստի հետ, քան այժմ. դրա համար բժշկի կատարած ծառայութիւնը պէտք է վարձատրւած լինէր թանկ գնով:

Սակայն գիտակից բժիշկներն իրանց ծառայութեան համար սասնում են աւելին, քան հարկն է, բայց այստեղ պարզուում է առարկայի ասկառարեան ազդեցութիւնը, որը խանգարում է տնտեսական կեանքի ուղիղ ընթացքը:

Փ Ո Ղ Ե Ի Գ Ի Ն

Մենք արդէն գիտենք, թէ ինչից է կախած իւրաքանչիւր առարկայի արժէքը: Երկու օգտակար առարկայ փոխանակելով իրար հետ, օրինակ, երկաթ և կտաւ, մենք կտեսնենք, թէ քանի գրվանքայ երկաթ պէտք է տալ 20 արշին կտաւի համար: Հարկ կլինի առաջարկելու երկաթի այնպիսի քանակութիւն, որի մէջ լինի այնքան հանրա-անհրաժեշտ աշխատանք, որքան 20 արշին կտաւի մէջ:

Բայց այն, ինչոր մեզ այդպէս հասկանալի է՝ և որ մենք կարող ենք դիտել իւրաքանչիւր փոխանակութեան ժամանակ, չի կարող յայտնի լինել վայրենի ցեղերին, որոնք, պատահաբար հանդիպելով իրար, կփոխանակէին իրանց արդիւնաբերութեան աւելորդը: Այսխանակէին իրանց արդիւնաբերութեան աւելորդը է այն, թէ մի ցեղ տեղ բացառապէս դէպքից կախած է այն, թէ մի ցեղ քանի գլուխ ապրանք (СКОТА) կտար այն հասարակ գործիքների փոխանակութեան, որոնց կամենում էր ստանալ: Քանակութիւնը կախած է կամ այն բանից, որ ցեղն աւելի կարիք ունի միւս ցեղի արտադրութեանը, կամ այն բանից, թէ ով ում կխաբի և այլն:

Բայց այն չափով՝ որ չափով երևացել են աւելի լաւ գործիքներ և տեղի է ունեցել մարդկանց մէջ աշխատանքի բաժանում, զանազան ցեղեր սկսել են արդիւնաբերել տարբեր առարկաներ: Այդ պատճառով իւրաքանչիւր ցեղ իւր արդիւնաբերութեան փոխարէն ըստիպւած էր ձեռք բերել ուրիշ ցեղերից կամ մասնաւոր անհատներից շատ բազմաթիւ առարկաներ: Այդ փոխանակութեան յաճախ կրկնելովն, իւրաքանչիւր այն առարկայի քանակութիւնն, որը տւած է միւս առարկաների որոշ քանակութեան փոխարէն, դարձաւ անփոփոխ և բոլորին յայտնի մեծութիւն: Օրինակ՝ այն ցեղը, որը զբաղւել է բացառապէս անասնապահութեամբ, յաճախ

ստիպւած է եղել փոխանակել ուրիշ շատ առարկաների հետ, որոնց նա ինքը չէ արտադրել:

Ենթադրենք, մէկ անգամ նա փոխանակեց մէկ գլուխ ապրանքը (անասունը) 10 կատարելագործւած աչեչով, մի ուրիշ անգամ 2 գլուխ ապրանքը մի չափ ցորենով, վերջապէս մի երրորդ անգամ էլ 5 զոյգ ոտնամանի հետ (սանդալներ) և այլն: Այսպիսով, այդ ցեղը և այն անհատները, որոնք իրար հետ շփուել են, սովորել են մի որևէ առարկայի արժէքը որոշել, համեմատել մի գլուխ ապրանքի արժէքի հետ և դուրս բերել հետևեալ հաշիւը:

10 աչեչն արժէ այնքան, որքան 1 գլուխ ապրանքը:

1/2 չափ ցորենը » » 1 » »

1 երիտասարդ սարուկը արժէ այնքան, որքան 1 գլուխ ապրանքը:

5 զոյգ ոտնամանը արժէ այնքան, որքան 1 գլուխ ապրանքը:

Այստեղ բոլոր օգտակար առարկաների արժէքը չափուում է մէկ գլուխ ապրանքի արժէքի հետ:

Ժամանակի ընթացքում, երբ իւրաքանչիւր ցեղի մէջ սկսեց կատարւել զանազան տեսակ զբաղմունքներ, առաջացան մարդիկ, որոնք զբաղւելով բացառապէս դերձակութեամբ, կոշկակարութեամբ, հիւանութեամբ պէտք է իրանց զանազան կարիքներին բաւարարութեան համար փոխանակէին իրանց պատրաստածը միւս մարդկանց արդիւնաբերութեան հետ:

Այդ դէպքում դերձակը պէտք է այսպէս հաշւէր՝

20 արշին կտաւը հաւասար է 1 սիւրտուկի.

10 գրվանքայ թէյը » » 1 » »

1 պահարանը » » 1 » »

1 չետովերիկ ցորենը » » 1 » »

Այսպիսով սիւրտուկը նրա համար եղել է որպէս փող, որով նա ձեռք է բերել ամեն ինչ: Իւր հերթին, որպէս փող կօշկակարի համար եղել է կօշիկները, հիւանի համար պահարանը և այլն:

Ի հարկէ այդ առարկաներից ոչ մէկը չէ կարող

ամեն ժամանակ փողի դերը կատարել, որովհետև այդ բանն իւր հետ ունի շատ անյարմարութիւններ, եթէ օրինակ, 10 գրվ. թէյի փոխարէն դերձակը տար իւր սիւրտուկը, այդ դէպքում նա ի՞նչ պէտք է անէր, եթէ նա կամենար միայն մի գրվանքայ թէյ գնել: Նա չէր կարող սիւրտուկից մի կտոր կտրել, որովհետև այդ ոչ ոքի համար ոչ մի արժէք չէր ներկայացնի: Միւս կողմից, անյարմար է սիւրտուկն երկար պահել, որովհետև նա հեշտութեամբ կարող է փչանալ և կորցնել իւր արժէքի որոշ մասը. նոյնպէս անյարմարութիւններ տեղի կունենային և միւս թւած առարկաների մէջ, եթէ նրանցից կամենային օգտուել որպէս փողից:

Փող կարող է դառնալ միայն այնպիսի ապրանքը, որը կարող է բաժանւել մանր մասերի, չկորցնելով այդ դէպքում սակայն իւր արժէքը, և պահել երկար: Ոսկին է յատկապէս այդպիսի ապրանք. ունի թւած բոլոր յատկութիւնները, և նա դարձել է ամենուրեք այնպիսի առարկայ, որին յարմարուում են միւս բոլոր ապրանքները. այսինքն դարձել է ապրանք-փող:

Սկզբում ամեն մի առարկայի գինն որոշուում էր սակաւ որոշ քանակութեան արժէքով: Այսպէս էին ասում. «Մէկ սիւրտուկն արժէ երկու մսխալ ոսկի, պահարանը՝ երեք մսխալ և այլն: Հետևապէս, որպէսզի ոսկին ամեն անգամ չբաժանենք մասերի և չկշռեն և նոյնպէս որպէսզի հեռու լինին այդ դէպքում հնարաւոր խաբէութիւնից, սկսեցին որոշ ծանրութեան և յատկութեան փող կտրել: Այսպիսով, եթէ ասենք, սիւրտուկն արժէ 10 բուրլի, այդ նշանակում է նրա մէջ գտնուում է յատկապէս մարդկային աշխատանքի այնպիսի քանակութիւն, որպիսին զօրժ է դրւած ոսկու հանելու և պատրաստելու համար, և որից կտրւած է 10 բուրլիանոց իմպէրիալը <sup>1)</sup>»:

1) Մանօթ. եթէ մենք վճարենք ապրանքին ոչ թէ ոսկով, այլ թղթէ գրամով, որը ոչ մի արժէք չունի, այդ դէպքում թղթագրամը կվերցնեն միայն այն պատճառով, որ զանձարանը հէնց առաջին պահանջին տալիս է գրա փոխարէն համապատասխան քանակութեամբ ոսկէ կամ արծաթէ փող:

Այժմ, ոսկէ ապրանքի գոյութեան ժամանակ, դեր-  
ձակը, որ ունի աւելորդ և իրան ոչ պիտանի սիւրտուկ,  
բայց ընդհակառակը կարիք ունի կօշիկներէ, գրքերի, և  
ուրիշ առարկաների, արդէն ստիպւած չի լինի փրնտ-  
րելու այնպիսի հացթուխ, կօշկակար և գրավաճառ, ո-  
րոնց հարկաւոր լինի նրա սիւրտուկը, որպէսզի փոխա-  
նակելով ստանայ նրանցից հարկաւոր առարկաներ: Նա  
կ'փնտրի միայն այն տեսակ մարդու, որին հարկաւոր է  
սիւրտուկը և կստանայ նրանից այնքան փող, որքան  
արժէ սիւրտուկը (մենք արդէն գիտենք, ինչպէս է ո-  
րոշուում առարկայի արժէքը). ստացած փողով կ'ընի այն  
բոլորը, ինչ որ ինքը ցանկանում է, վճարելով իւրա-  
քանչիւր ապրանքին ըստ նրա արժէքի:

Վերջապէս մեր դերձակը կստանայ իւր սիւրտուկի  
փոխարէն 20 գրվանքայ հաց, սեղան, մի գոյգ աթոռ,  
կամ գիր: Այդ բոլոր առարկաները միասին արժեն այն-  
քան, որքան սիւրտուկը՝ այսինքն այդ բոլորի պատրաս-  
տութեան համար գործադրւած է այնքան միջին թւով  
մարդկային աշխատանք, որքան նրա սիւրտուկի վրայ 1):  
Արժէ յիշել, որ առարկայի փոխանակական արժէքը, եթէ  
նա արտայայտում է ոչ թէ սովորական ապրանքներով,  
այլ փողով՝ կոչուում է նրա գինը: Այսպիսով, եթէ դեր-  
ձակն իւր սիւրտուկի համար ստացել է 10 բուբլի, այդ  
դէպքում կարելի է ասել, որ 10 բուբլին սիւրտուկի  
գինն է:

Վ.

Կ Ա Պ Ի Տ Ա Լ.

10 բուբլիով սիւրտուկ ծախող և այդ փողով պա-  
հարան գնող դերձակը, ստանում է վերջապէս այնպիսի

1) Շանօր. Ի հարկէ սիւրտուկի մէջ եղած աշխատանքի  
քանակութիւնն որոշելու ժամանակ աչքի առաջ պէտք է ունե-  
նալ ոչ միայն դերձակի, այլ և կանեփ ժողովող գիւղացու, կա-  
նեփ գործող ջուշակների աշխատանքները և աւելացնել այն  
աշխատանքի վրայ, որ գտնուում է արդիւնաբերութեան գոր-  
ծիքների, կանեփը ջուշակի, մահուղը դերձակի մօտ փոխադ-  
րելու մէջ և այլն:

առարկայ, որն ունի այնպիսի արժէք, ինչպէս նրա  
սիւրտուկը, եթէ ի հարկէ, նա այնքան մաքուր է, որ  
չէ կամենում ոչ մէկին խաբել և այնքան ճարպիկ է,  
որ չի թոյլ տալիս իրան խաբելու:

Միակ օգուտը, որը ստանում է դերձակը սիւր-  
տուկը ծախելու և պահարան գնելու ժամանակ, այն է,  
որ նա ազատուում է իրան ոչ պիտանի առարկայից  
(սիւրտուկ) և ձեռք է բերում գրա փոխարէն օգտակար  
առարկայ (պահարան): Նա, ի հարկէ, կատարելապէս  
գոն է, չնայած, որ բացի դրանից ուրիշ ոչ մի բանով չի  
օգուտել:

Իսկ ի՞նչ կանէր արդեօք մեր դերձակը, եթէ չյա-  
ջողէր նրան գտնել սիւրտուկ գնողին:

Հիւանը չէր տայ սիւրտուկի համար պահարանը, իսկ  
հացթուխը հացը, եթէ հարկաւոր չլինէր նրանց այդ իւրը:  
Նրանք իրանց ապրանքի համար կպահանջէին իբրև վը-  
ճար աւելորդ փող և 20 սիւրտուկ ունեցող դերձակը  
կարող էր այդ դէպքում մեռնել քաղցից: Իսկ այժմ  
իւրաքանչիւրն էլ կարող է ընկնել այդպիսի անտանելի  
դրութեան մէջ, եթէ նա պաշարի համար պահած փող  
չունի: Այսպիսով իւրաքանչիւր մարդու համար անհրա-  
ժեշտութիւն է ներկայանում ունենալ, ինչպէս էլ որ  
լինի, այնքան փող, որով կարելի լինի անհրաժեշտ պա-  
հանջներին բաւարարութիւն տալ: Այդ անհրաժեշտու-  
թիւնը իւրաքանչիւր օր մեծանում է այն չափով, որ  
չափով մեծանում է ոչ սեփական պիտոյքների, այլ  
փոխանակութեան նպատակով արդիւնաբերած առար-  
կաների թիւը, որովհետև իւրաքանչիւրը աւելի մեծ  
բանակութեան առարկաներ է ձեռք բերում ուրիշներից  
փողով:

Բայց սրտեղից փող ստանալ: Ոսկին, ինչպէս յայտ-  
նի է, բանւորները հանում են հանքերում: Բայց որով-  
հետև ոսկու ամբողջ լեռները չեն կարող կշտացնել քաղ-  
ցածին, ոչ էլ տաքացնել սառածին, ուստի ոսկու վրայ  
գործող բանւորները պէտք է փոխանակեն իրանց ոսկին  
միւս մարդկանց զանազան արդիւնաբերութիւնների հետ,

օրինակ, հացի, մսի, սիւրտուկի և այլն: Ի հարկէ, իւրաքանչիւր ապրանքի համար նրանք կտան այնքան ոսկի, որքան հանւած է հանրա-անհրաժեշտ ժամանակում, արդիւնաբերած ապրանքը գնելու: Այսպիսով գերձակը կստանայ իւր սիւրտուկի համար ոսկի և այդ ոսկով կգնի հացթուխից հաց, հիւանից սեղան և այլն: Այդ օրինակում, ինչպէս տեսնում էք, գերձակն ինքը ծախում է իր ձեռքի գործը, նոյնը հիւանը և հացթուխը: Եթէ ամեն ժամանակ այդպէս պատահէր, եթէ իրանք արդիւնաբերողները ծախէին իրանց ձեռքի գործը և միայն իրանք ստանային հանքահաններից ոսկի, այդ դէպքում ոչ ոք չէր կարող ապրել առանց աշխատանքի: Մենք գիտենք միայն, որ իրականութեան մէջ այդպէս չէ լինում. կան շատ մարդիկ որոնք ապրում են շատ շքեղ, սակայն ոչինչ չեն շինում: Այդ առաջանում է նրանից, որ որևէ կերպով փող ձեռք բերած այդ մարդիկ հնարաւորութիւն են գտել աստիճանաբար մեծացնել դրա (փողի) քանակութիւնը առանց իրանց կողմից որևէ աշխատանքի: Հասնել դրան կարելի է ամենից առաջ այսպիսի ճանապարհով:

Փողով գնում է ապրանք, և յետոյ ծախում թանկ աշխատանքով: Մարդիկ սկսում են գնել ապրանքն ոչ թէ նրա համար, որպէսզի բաւարարութիւն տան իրանց կարիքներին, այլ բացառապէս այն բանի համար, որ հեռուեալ վաճառքին ստանան աւելի շատ, քան իրանք վճարել են:

Գերձակը և հիւանը միևնոյն արժէք ունեցող ապրանքները փոխանակում են: Վաճառականը վաճառքի ժամանակ ստանում է աւելի շատ փող, քան ինքը վճարել է: Այսպիսով վաճառականը գնում է նրա համար, որպէսզի ծախի, այդ նշանակում է տալ որոշ քանակութեան փողի գումար, յետոյ աւելի շատ ստանալու համար, չմեծացնելով ապրանքի արժէքը որևէ նոր աշխատանքով:

Այն փողերը, որոնք իրենք իրենց ածում են կազմում են և կապիտալ: Իհարկէ փողի այդտեսակ կրկնա-

պատկերում դէպքում ոչ մի նոր արժէք չի ստեղծում: Որպէսզի ապացուցենք այդ օրինակով, ենթադրենք, որ Պետրոսը գնել է Յովհաննէսից 100 բուբլու կտաւ և ծախել Պողոսին 110 բուբլիով:

Նախ քան այդ պայմանի կատարելը Պետրոսի մօտ կար 100 բուբլի կանխիկ փող, Յովհաննէսի մօտ 110 բուբլու արժողութեան կտաւ, իսկ Պողոսն էլ ունէր 110 բուբլի կանխիկ փող: Երեքի մօտ միասին կար 310 բուբլու արժէք: Պայմանի կատարելուց յետոյ Պետրոսի մօտ կար 110 բուբլի, Յովհաննէսի 100 բուբլ, իսկ Պողոսի մօտ եղած կտաւը, իհարկէ, ինչպէս և առաջ, ներկայացնում է միայն 100 բուբլու արժէք, որովհետև ոչ մի նոր աշխատանք այդ կտաւի վրայ չէ դրած: Այսպիսով, երեքի մօտ կլինի նորից 310 բուբլու արժէք:

Ամբողջ տարբերութիւնը նրանումն է, որ 10 բուբլու արժէքը Պողոսի գրպանից անցաւ Պետրոսի գրպանը: Այդ կատարելապէս հասկանալի է, որ արժէքը ստեղծում է միայն աշխատանքով: Մեր օրինակում ոչ մի աշխատանք չկար (եթէ չհաշուենք այն աննշան աշխատանքն, որը գործ է դրւած չափելու, ծախելու ժամանակ մի քանի արշին կտաւի վրայ), ուստի և արժէքը չէր կարող մեծանալ: Պետրոսին յաջողւեց աշխատել 10 բուբլ. գնելով այն, Պողոսի գրպանից իւր սեփական գրպանը, բացառապէս այն բանի շնորհիւ, որ նա իւր փողերը դարձրեց առևտրական կապիտալ:

Աւելի հեշտութեամբ Պետրոսը կարող էր մեծացնել իւր կապիտալը ի վնաս Պողոսի, եթէ տար նրան 100 բուբլի, պայման կապելով, որ որոշ ժամանակ անցնելուց յետոյ, նա վերադարձնի պարտքը 10 բուբլի տու կոս վճարելով: Այս օրինակում Պետրոսն իւր կապիտալը մեծացնելու համար, բոլորովին ապրանք չէ առնում, յետոյ աւելի թանգ ծախելու, այլ ուղղակի վերցնում է Պողոսից նրան պատկանող փողի մի մասը, դարձնելով այսպիսով իւր 100 բուբլին վաշխառուական կապիտալ: Այս երկու դէպքերում էլ, ոչ առևտրական կապիտալը,

ոչ էլ վաշխառուական կապիտալը ոչ միարժէք չեն ստեղծում, այլ միայն մի մարդու ունեցածը տեղափոխում են մի ուրիշի գրպանը:

Կապիտալը կարող է ստեղծել նոր արժէք միայն այն դէպքում, եթէ նա շուկայում գտնի և ձեռք բերի մի այլ տեսակ ապրանք, որը ունենայ իւր մէջ արժէք արտադրող ոյժ և, որը (ապրանքը) իբրև օգուտ տար այդ ոյժը գնողին: Սակայն, ինչպէս յայտնի է, միակ ոյժը, որ ստեղծում է արժէք՝ մարդուս քանկութեան ոյժն է: Ուստի եթէ շուկայում մարդուս բանւորական ոյժը ծախւում է որպէս ապրանք և գնւած կլինի միայն կանխիկ փողին տիրապետողից, հետևապէս այդ ոյժն էլ պէտք է աշխատի յօգուտ գնողի և սողժի նրա համար նոր գերագանցող արժէքներ, իհարէ և աշխատանքի վարձատրութիւն:

Այսպէս կապիտալիստը ոչ մի կարիք չունէր բանւորական ոյժ գնելու: Միայն այդ դէպքում կապիտալը կարող է մեծանալ և ստանալ իւրաքանչիւր 100 բուրջու փոխարէն նոր և արդէն ներկայիս 110 բուրջու արժէքը: Այդ ձեռք է բերւում միայն նրանով, որ կապիտալիստը վարձում է բանւորական ոյժն որոշ վճարով ստիպում է նրան աշխատել իւր մօտ, իսկ արտադրած արդիւնքը ծախւում է յօգուտ իրան:

Թէ ինչ պայմաններում հնարաւոր կլինի բանւորական ոյժի այդպիսի գնումը և թէ ինչից է կախւած իւր աեսակի մէջ միակ այդ ապրանքի գինը — մենք կտեսնենք այդ յաջորդ գլխում:

### VI.

#### ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՈՅԺԸ ՈՐՊԷՍ ԱՊՐԱՆՔ

Վերոյիշեալ դատողութիւնները ցոյց աւին մեզ, որ իւրաքանչիւր առարկայ կարող է ապրանք դառնալ: Անհրաժեշտ պայմանը այդ դէպքում ներկայանում է այն, որ տւած առարկայի սեփականատէրն ունենայ

իրաւունք և հնարաւորութիւն ազատ կարգադրելու այն իրը, որը նա կամենում է փոխել գործիքի հետ: Ի հարկէ, նոյն իսկ առարկան պէտք է ունենայ սպառողական արժէք, այսինքն պէտք է ծառայի որոշ պիտոյքներէ բաւարարութեան, որովհետև հակառակ դէպքում ոչ ոք չի ցանկանայ փոխել, այն, իր օգտակար առարկայի հետ: Բացի այդ, իշեալ առարկան, եթէ մի որևէ կերպ օգտակար չլինի իրայ տիրոջը, պէտք է դառնայ աւելորդ և նոյն իսկ անպէտք, այնպէս, որ ոչ ոք չպէտք է փոխարկի այդպիսի առարկան, առանց որի էլ նա չի կարող կառավարւել:

Այդ բոլոր պայմաններին բաւարարութիւն է տալիս շուկայում, ինքն իրան ծախող, բանւորական ոյժը: Քննենք այն պատմական պայմանները, որոնց շնորհիւ բանւորական ոյժը դարձել է ապրանք:

Քանի որ գոյութիւն ունէր ստրկութիւնը, մինչև այդ իօսք չէր կարող լինել բանւորական ոյժի գնման մասին: Այդ ժամանակում մարդս ինքը ծախւել է իր բանւորական ոյժի հետ միասին, այնպէս, ինչպէս ծախւում է կենդանին (CROTT) և վաճառքից յետոյ ստրուկն անցել է գնողի լիակատար իշխանութեան տակ: Այսպիսով ստրուկը համարւել է ապրանք, իր, որին կարելի էր փոխանակել, ինչպէս շատ ուրիշ բաներ. մի խօսքով, նա եղել է միայն գործիք, աշխարհից նւերւած <sup>1)</sup>:

Եւ նոյն իսկ ճորտատիրութեան ժամանակ բանւորական ոյժը դեռ չէր կարող ապրանք դառնալ, բանւորը ստիպւած լինելով ամբողջ տարւայ ընթացքում աշխատել իւր տիրոջ համար, իրաւունք չէր ունենայ իշխելու իւր ցանկութեան համաձայն իր բանւորական ոյժի վրայ և պահանջելու նրա փոխարէն վարձադրութիւն, ըստ ապրանքների փոխանակութեան ընդհանուր օրէնքների, չէր կարող աւելի մեծ վարձադրութիւն

1) Մտնօք. Այդպէս է անւանել ստրուկներին յոյն փիլիսոփայ Արիստոտելը:

պահանջել թանգութեան բարձրացման ժամանակ: Այդ տեսակէտից ճորտութեան իրաւունքը ըիչ տարբեր-  
ւեց ստրկութիւնից:

Միայն այն ժամանակ, երբ բանւորը ստացաւ անհատական ազատութիւն և դարձաւ միւսներէից անկախ, կարողացաւ օգտուել ուղղակի իւր բանւորական ոյժից յօգուտ իրան, կամ որոշ ժամանակ զիջել այն ուրիշին:

Մենք, սակայն, գիտենք, որ առարկան կարող է ապրանք դառնալ միայն այն դէպքում, եթէ նա օգտա-  
կար է և դրա հետ միասին հարկաւոր չէ իր տիրոջը: Իրա համար բանւորական ոյժը, որի շնորհիւ ստեղծում են կեանքի բոլոր միջոցները, միայն այն ժամանակ է դառնում ապրանք, երբ նա դադարում է տիրապե-  
տողին օգտակար լինելուց, այսինքն, երբ տիրապետողը այդ օգտակար բանւորական ոյժից չի կարող մինչև անգամ ինքն օգտուել: Իսկ մարդը կարող է օգտուել իր բանւորական ոյժից այն ժամանակ, երբ նա ունի գոր-  
ծադրութեան համար նիւթ և աշխատանքի գործիքներ, որոնց օգնութեամբ նա կարող է հում նիւթից պատ-  
րաստել օգտակար առարկաներ. բացի դրանից արդիւ-  
նագործութեան ընթացքում բանւորը պէտք է ունենայ կերակուր, հագուստ, բնակարան և այլն: Եթէ բանւո-  
րական ոյժի տէրը ունի համ նիւթը, գործիքներ և գոյութեան համար ամեն ինչ, նա չի մտածի այդ դէպքում իւր բանւորական ոյժը ուրիշին զիջելու մա-  
սին, որովհետև կարող է ստեղծել սպառողական նոր արժէքներ:

Քանի որ բանւորական ոյժի տիրապետողը միաժա-  
մանակ տիրում է արդիւնագործութեան միջոցներին, մինչև այդ ժամանակ էլ, նրա բանւորական ոյժը չի կարող ապրանք դառնալ: Միայն ժամանակի ընթաց-  
քում առաջ են գալիս այնպիսի յարաբերութիւններ, որոնց շնորհիւ բանւորն իւր միակ սեփականութեան հետ, որին նա տիրում է որպէս ապրանք, այսինքն բանւորական ոյժի հետ միասին, նա կարող է փոխա-  
նակել, փոխարէնը ստանալով ապրուստի անհրաժեշտ

միջոցներ. նա ստիպւած է գնալ շուկայ ներկայացնելու իրան ծախելու համար, ինչպէս միւս բոլոր ապրանք-  
ները: Եթէ բանւորին չյաջողւի իւր այդ ապրանքը փոխանակել փողով և եթէ նա այդ ժամանակ չունենայ կեանքի ապահովութեան միջոց, այդ դէպքում նրան կսպառնայ քաղցը. այդ քաղցը և կստիպի նրան յաճախ աշխատանքի այնպիսի պայմաններին համաձայնել, որոնք խիստ հակասական են բանւորի անհատական ա-  
զատութեանը:

Դրա հետ միասին պէտք է յիշել և հետևեալը. նախ-  
նական արհեստաւորի աշակերտը կարող է յուսալ, որ ժամանակը լրացնելուց և արհեստը սովորելուց յետոյ հեշտութեամբ մի փոքրիկ գումար կը հաւաքի, մի ոչ թանգ անիւաւոր մեքենայ և մի քանի հասարակ գոր-  
ծիքներ գնելու և այնուհետև կաշխատի տանը իւր հա-  
մար և կը կօգտուի իւր բանւորական ոյժից յատկապէս յօգուտ իրան, հարկադրւած չը լինելով զիճել այն ու-  
րիշին: Միթէ կարող է ներկայիս բանւորը նոյն իսկ մտածել, որ երբեքից է կարող է տէր դառնալ մի գործա-  
ւանի, ուր ինքը աշխատում է և որը ձեռք բերելու հա-  
մար հարկաւոր է տասնեակ և հարիւր հազարներ: Ակ-  
ներև է, որ գոյութիւն ունեցող պայմաններում ոչ միայն նա, այլ և նրա որդիքը մշտապէս կը մնան վարձկաններ և ստիպւած պէտք է լինեն ծախել իրանց բանւորական ոյժը. աւելին ևս. նոյն իսկ նրանք որոնք աշխատում են իրանց համար արհեստանոցներում, վաղը ստիպւած պէտք է լինեն վաճառքի հանել իրանց բանւորական ոյժը, որովհետև գործարանատէրերի ուժեղացող մրցու-  
մի ճնշումով արհեստները ընկնում են և մանր արհես-  
տանոցների տէրերը քայքայւում:

Եւ այսպէս, եթէ բանւորական ոյժը զարձել է ապ-  
րանք և ինչպէս միւս բոլոր ապրանքները կարող է ծախուել, այն ժամանակ մեր առաջ այսպիսի հարց է ներկայանում. թէ որքան է այդ ապրանքի արժէքի մե-  
ծութիւնը և բանւորական ոյժն ինչ գնով պէտք է ծախ-  
ւի շուկայում:

Մենք գիտենք ամեն մի ապրանքի արժէքը կախած է նրա արդիւնաբերութեան համար գործ դրւած հանրամանրածեշտ բանւորական ժամանակի քանակութիւնից: Բանւորական ոյժի արդիւնաբերութեան համար ի՞նչն է ներկայանում անհրաժեշտ:

Պատասխանը շատ հասարակ է: Որպէսզի բանւորական ոյժը ամեն օր երևար շուկայում, հարկաւոր է, որ կենդանի մարդը, որն իւր մէջ կրում է նրան, հանի վաճառքի, լինի առողջ և կարողանայ գործի կպչել: Իսկ միայն այն մարդը կարող է այդ անել, որը գործ է ածում անհրաժեշտ քանակութեամբ կերակուր, ունի հանգրստանալու տեղ, հագնելու բան, մի խօսքով մարդ, որը բաւարարութիւն է տալիս իր բոլոր անհրաժեշտ պահանջներին: Անա այդպէս կեանքի համար անհրաժեշտ այդ առարկաների քանակութիւնը՝ որոնք պահանջում են բանւորական գործադրած ոյժի վերականգնման համար և որոնք բանւորին, հնարաւորութիւն են տալիս շարունակ աշխատելու, որոշում է բանւորական ոյժի փոխանակական արժէքը: Եւ եթէ բանւորն իւր աշխատանքի փոխարէն ստացել է ուղղակի ապրուստի համար անհրաժեշտ համապատասխան առարկաների քանակութիւն, նա կը ստանար իսկապէս այնքան, որքան իրան հարկաւոր էր ապրելու համար: Բայց սովորաբար բանւորը վարձը ստանում է փոքով, որով և գնում է իր համար անհրաժեշտ առարկաներ: Փողի այն գումարն որը ստանում է բանւորն իր աշխատանքի համար է միևնոյն ժամանակ և բանւորական ոյժի գիւնը փողով: Նա պէտք է բաւականացնի ապրուստի բոլոր անհրաժեշտ առարկաները գնելու համար:

Մարդուս պահանջները չափազանց տարբեր են և կախւած կլիմայական առանձնայատկութիւններից և տեղական հասարակական պայմաններից: Տաք երկրներում մարդս բաւականանում է հագուստի և կերակրի քիչ քանակութեամբ, ևս առաւել հասարակ բնակարանով: Ուստի բանւորական վարձն այնտեղ աւելի քիչ է: Ընդհակառակն, աւելի սառն երկրներում բան-

ւորական ոյժը մարդու մէջ պահպանելու համար հարկաւոր է աւելի տաք հագուստ, աւելի առատ կերակուր և բացի դրանից տաքութիւն: Այդ պատճառով բանւորական ոյժի գինը այնտեղ ըստ անհրաժեշտութեան բարձր է, որովհետև մարդս չէ կարող այնտեղ ապրել, եթէ նրա աշխատանքի վարձը բաւականանար միայն այն տեսակ կերակրի և հագուստի, որպիսին կարելի է աւելի տաք երկրի բնակիչներին համար:

Բացի այդ աշխատավարձի վրա ազդեցութիւն ունեցող բնական պայմաններից, բանւորին պահելու ապրուստի անհրաժեշտ միջոցներ, ուրեմն և բանւորական ոյժի գինը գլխաւորապէս կախւած է բանւոր դասակարգի պետութեան մէջ ունեցած սովորութիւնից, նրա կրթութեան և զարգացման աստիճանից:

Կեղևից պատրաստուած տրեխները, օրինակ, տներն աւելի լաւ են պահպանում քան կաշիէ կօշիկները, որը բանւորները սկզբում բոլորովին չեն գործ ածել: Իսկ այժմս կօշիկները դարձել են ապրուստի համար ընդհանուրի անհրաժեշտ առարկաներից մէկը և բանւորը չի համաձայնել ծախել իւր բանւորական ոյժն այնպիսի գնով, որը զրկէ նրան կօշիկներ կրելու հնարաւորութիւնից: Յրանսխայում բանւորը ամեն օր պէտք է միս ունենայ և լրագրի ընթերցում: Դրա համար նա պահանջում է այնպիսի վարձ, որը հնարաւորութիւն տար նրան այդ անելու:

Մինչև անգամ բաւարարութիւն տալով իւր օրգանիզմի բոլոր կարիքներին, բանւորը ժամանակի ընթացքում ծերանում և աստիճանաբար կորցնում է իր բանւորական ոյժը ու վերջապէս մեռնում: Այդ մեռած բանւորական ոյժի փոխարէն շուկայում պէտք է յայտնւի մի ուրիշ թարմ և երիտասարդ ոյժ: Բանւորական ոյժի այդ հաստատուն հոսանքի շնորհիւ ազգաբնակչութեան շատանալուն, հասնում է շուկան: Բանւորների հին տոհմը մեռնելով, թողնում է երեսի վրա իւր նոր սերունդներին նոր տիրապետողներին և նոր բանւորական ոյժ ծախողներին: Ուստի ապրուստի միջոցների

քանակութիւնը, որը հարկաւոր է բանւորական ոյժի իւրաքանչիւր օրւայ վերականգնման. պէտք է բաւականացնէր և երեխաների դաստիարակութեան կեանքի առաջին տարիների ընթացքում, քանի որ նրանք չեն սկսել աշխատել իրանք իրանց (համար 1):

Բանւորական ոյժը, որը ծախւած լինելու պատճառով որոշ ժամանակ օգուտ է տալիս գնողին, չի կարելի բաժանել բանւոր անհատից ընդհակառակ նա (ոյժը) գտնուում է բանւոր էակի, մկանների երակների, նեարդերի և ուղեղի մէջ: Հետևապէս բանւորական ոյժի վաճառքը նոյն մարդու գանազան ձևի ժամանակաւոր վաճառքն է: Բանւորական ոյժ գնողը, եթէ կամենում է նրանից օգուտ ստանալ պէտք է իրաւունք ունենայ բանւոր անհատի վրայ, որպէսզի կարողանայ ցոյց տալ նրան, թէ ինչ ուղղութեամբ և ինչ եղանակով նա պէտք է գործադրի իւր բանւորական ոյժը, որը գտնուում է միառժամանակ կապիտալիստի անօրինութեան տակ: Հէնց այդ նպատակով հաշւեմատեանների մէջ առաջին տեղը բռնում է բանւորի «անպայման հպատակելու» (սնդիկը իւր գործատիրոջ <sup>2</sup>):

Վարձւած բանւորը վայրկեան առ վայրկեան հաշւում է իւր բանւորական ոյժը. նրա բանւորական ոյժի որոշ մասը անցնում է իւրաքանչիւր ըուպէ կապիտա-

1) Ծանօթ. Այդտեղից մենք տեսնում ենք, որ եթէ մանկական աշխատանքը արգելւած լինէր և երեխաները սկսէին աշխատել աւելի ուշ, հասունացած ժամանակ, ապա բանւորի ընտանիքի աշխատանքը չէր ցածրանար, քանի որ չափահաս բանւորները կստանային անպիսի վարձ, որ բաւականաւոր և երեխաների կրթութեաւ: Ի հարկ է, դրանից կօգուէր ամբողջ հասարակութիւնը, որովհետև բանւորների որդիքը հնարաւորութիւն կստանային սովորել ուսումնարաններում և կատարելապէս զարգացնել իրանց ոյժերը: Բանւոր գասակարգն էլ կ'օգուէր այն գէպքում, երբ երեխաներով բռնւած տնտեսութիւն գտնէին զրաղմունքներ. մրցումն էլ, որը մղւում է վարձագինը ցածրացնելու համար, կ'մեղմանար:

2) Ծանօթ. Մվեատլովսկիյ. Գործարանի բանւոր: Վարչաւա 1899, երես 32:

լիստի սեփականութեան, և միայն աշխատանքը վերջացնելուց յետոյ, երբ գործադրւած է ամբողջ բանւորական ոյժը կապիտալիստը դառնում է իւր գնած բանւորական ոյժի արտադրած բոլոր արդիւնաբերութիւնների իրական տէրը, իսկ բանւորական ոյժ ծախող բանւորն էլ նորից դառնում է ազատ անհատ, որի հետ կապիտալիստը կարող է նորից պայման կապել, փողը տալով աշխատանքի ընդունակութիւն գնելու համար:

Ուստի ճշմարտապէս կարելի է ասել, որ բանւորն ամենայն աշխատանքի ժամանակ տալիս է գնողին իւր միակ ապրանքը—մասամբ բանւորական ոյժը. գնողն էլ նոյնպէս, այսինքն յաճախ դառնում է գնած ապրանքի—բանւորական ոյժի տիրապետող, որի համար վարձատրել է միայն աշխատանքն անմիջապէս վերջացնելուց յետոյ (սկզբում փողի վճառելը - բացառութիւն է): Այն ինչ, բանւորը համարեայ ամեն ժամանակ, սկզբումն է տալիս կապիտալիստին իւր բանւորական ոյժն, այնպէս որ, աշխատանքի իւրաքանչիւր ժամից յետոյ տէրը նրանցից գնած ապրանքի մի մասին—բանւորական ոյժին դառնում է սեփականատէր, այն ինչ բանւորը դեռ որևէ վարձատրութիւն չէ ստանում, որն էլ բանւորի համար հաշւում է ժամանակի ընթացքում տւած բանւորական ոյժի մի մասնիկը:

Եթէ բանւորների և գործարան տէրերի պայմանագրի համաձայն վարձատրութեան չափը բաւականին երկար է, ուստի կատարելապէս պարզ է, որ բանւորների կապիտալիստին ցոյց տւած կրեդիտն աւելի է մեծանում: Եթէ օրինակ, գործւածքի գործարանում իւրաքանչիւր ժամում պատրաստւում և մագազիններն է ուղարկւում հազարաւոր արշին կոտ, իսկ բանւորներին վարձատրում են մի շաբաթից յետոյ, պարզ է, որ այդ ժամանակի ընթացքում կրեդիտ են տալիս կապիտալիստին իրանց բանւորական ոյժը:

Առաջին հայացքից այդ բոլորը թւում է ոչ այնքան էլ կարևոր, սակայն, ինչ էլ որ լինի, ունի իւր լուրջ հետեւանքները թէ բանւորների և թէ գործատէրների համար:

Գործատէրը բանւորներին վճարելու համար կասայում երբէք փող չէ պահում. նա սովորաբար տեղաորում է նրանց դրամատներում որոշ տոկոսով: Այսպիսով, եթէ գործատէրը ստիպուած լինէր վճարել բանւորների աշխատաւարձն իւրաքանչիւր երեկոյ, այսինքն նրանց դնած որոշ բանւորական ոյժի որոշ մասը գործադրելուց անմիջապէս յետոյ, այդ դէպքում նա (կապիտալիստը) կզրկւէր այն բոլոր օրերի տոկոսներից, որոնց ընցթացքում նա օգտուում է բանւորների կրեզիտից: Ճիշտ է, որ եթէ մի օրւայ բանւորական վարձը կազմում է 50 կոպէկ, իսկ 100 բուբլու տոկոսը մի տարւայ ընթացքում 5 բուբլի, այդ դէպքում գործատէրը շաբաթական իւրաքանչիւր բանւորից կտանայ համարիայ միայն  $\frac{1}{3}$  կոպէկ, բայց եթէ այդ շարունակւի ամբողջ տարի և վարձողն ունենայ շատ բանւորներ այդ դէպքում, այդ մանր գումարներից կ'կազմւի մի շատ մէծ գումար, որովհետև ամեն մի բանւոր կտայ նրան տարեկան 15 կոպէկ:

Կարելի է առարկել դրա դէմ, որ բանւորները փողի այդ գումարը չեն կորցնում, որովհետև նրանք չեն կարող աճեցողութեան տալ իրանց իւրաքանչիւր օրւայ ստացածը:

Սակայն, իբրև հետևանք իրանց աշխատանքն ապառիկ տալու, այն է, որ նրանք խանդ են կորցնում, որն աւելի բարձր է, քան տոկոսներից գործատիրոջ ստացած օգուտը, որովհետև բանւորը ստիպուած է իւրաքանչիւր օր ապրելու համար, գնել սննդամթերք մթերքներ:

Հնարաւարութիւն չունենալով բոլոր դնածների համար կանխիկ փող վճարել, բանւորը ապառիկ է վերցնում և այդպիսով ընկնում մանր խանութպան-վաշխաւուների ձեռքը, որոնք բանւորին ապառիկ տալով բաց են թողնում վատ ապրանք. կշռելիս ու չափելիս էլ խաբում նրան, բացի այդ վերցնում են նրանցից շատ բարձր գներ: Սփիտոլովսկին (Վարչավայի շրջանի գործարանական վերատեսուչ) հնարաւոր է գտնում բանւորների վարձատրութեան երկար ժամանակամիջոցի

մնասակարութիւնը և բոլորովին արդարացի է համարում վարձատրութեան կարճ ժամանակամիջոցի ներմուծում<sup>1)</sup>:

VII.

ՅԱԻԵԼԵՍԱ ԱՐԺԷՔ

Տեսնենք ի՞նչպէս է գործ ածում կապիտալիստը բանւորից դնած ոյժը: Ի՞նչ եղանակով է նա գործ ածելու, կամ ի՞նչպէս ասում են տնտեսագէտները, այդ աւանձնահատուկ սպրանքի սպառելուց, օգուտ ստանում:

Որպէսզի պատասխանենք այդ հարցին, նայենք մանրամասն, թէ ի՞նչպէս է կատարում ապրանքների պատրաստելը կամ արդիւնաբերելը:

Եթէ որևէ մէկն ուզում է աշխատել, նա ամենից առաջ պէտք է ունենայ հում նիւթ, որի վրայ կարենայ աշխատանք գործ դնել. երկազործը պէտք է ունենայ հող, հանքահանք-հանք, դարբինը-երկաթ: Բոլոր հում նիւթերը, ինչպէս օրինակ, հացահատիկ հոնք, բուրշ, ներկայնում են բնութեան արտադրութիւն. ինքը մարդն ոչ մի նոր նիւթ չի կարող ստեղծել, նա միայն կարող է գոյութիւն ունեցող նիւթին տալ այլ ձև: Այսպիսով հողը, օդը, ջուրը, կազմում են որպէս մի անազին մագազին, որից մարդիկ վերցնում են աշխատանքի համար նիւթ: Մարդ վերցնում է այդ մագազինից նիւթը, քակում է նրա երկրի հետ ունեցած բնական կապերը և պատրաստում այնպէս, որպէսզի տայ նրան համապատասխան օգտակար ձևը: Իւրաքանչիւր առարկայ, որը շնորհիւ մարդկային ոյժի կտրւած է երկրից, բայց մնացած է դեռ անձեռնմխելի, ինչպէս օրինակ՝ հաւնած քարէ ածուխը, կտրւած ծառը և այլն, կազմւում է հում նիւթ:

Բաւական չէ, որ բանւորն ունենայ հում նիւթ. իւր բանւորական ոյժը գործադրու համար էլ նրան

1) Մանօթ. Գործարանի բանւոր: Երես 37:

հարկաւոր է ուրիշ առարկաներ, որոնք կարծես թէ կազմում են նրա ձեռքերի շարունակութիւնը, օրինակ՝ թիակ, որը մեծացնում է նրա բռնուցքի ոյժը. օրինակ՝ մուրճ և այլն: Այդպիսի օժանդակիչ միջոցները, ինչպէս թիակը և մուրճն են, կոչւում են, աշխատանքի գործիքներ: Քարը, որ գործ է ածում վայրենին կոկսեան ընկոյզը կտարեու համար, նոյնպէս աշխատանքի գործիք է, ինչպէսին կատարելագործւած մեքենան:

Հում նիւթը, աշխատանքի գործիքները, մարդու բանւորական ոյժը, այդ երեքը գլխաւոր ֆակտորներն են, որոնց միաբան գործունէութեան ժամանակ առաջանում է գործածութեան համար նոր յարմար արդիւնք (գործարանային-Ֆաբրիկաս կոչւած): Իմանալով այդ երեք ֆակտորները, կարելի է որոշել, թէ դրանցից ամեն մէկըն ի՞նչ ազդեցութիւն ունի կրկին երևան եկած արդիւնքի փոխանակական արժէքի, այսինքն ապրանքի վրայ:

Իւրաքանչիւր հում նիւթ, աշխատանքի շնորհիւ փոխում է իւր ձևը: Այսպէս, օրինակ՝ երկաթը տաքացնելու միջոցաւ դառնում է երկաթեայ թերթ: Այդ դէպքում հում նիւթը կարող է կամ ամբողջովին փոփոխելով դառնալ նոր արդիւնաբերութիւն, օրինակ՝ երկաթն երկաթեայ թերթ, կամ ամբողջովին գործագրել և անհետանալ, օրինակ՝ ածուխը, որը անհրաժեշտ է երկաթի հանածոն հալեցնելու համար. կամ հում նիւթի միայն մի մասը դառնում է նոր արտադրութիւն, իսկ միւս մասը մնում է անգործածելի, օրինակ, վուշը մանագի մօտ:

Հում նիւթի արժէքը կախւած է այն հանրա-անհրաժեշտ աշխատանքի քանակութիւնից, որը գործ է ածւում արդիւնաբերելու, կամ ձեռք բերելու այդ հում նիւթը: Այդ արժէքն առանց բարձրանալու և ցածրակայանում է պատրաստ իրերի արժէքին, որը ներկայանում է որպէս աշխատանքի հետևանք: Եթէ դերձակը մահուդից սիւրտուկ է կարում, այդ դէպքում մա-

հուդի արժէքն անցնում է սիւրտուկի արժէքի մէջ. այսպիսով գործ ածած նիւթի արժէքը պէտք է ներփակւի ստացած արդիւնքի արժէքի մէջ: Արժէքի ոչ մի աւելորդ մասնիկը չի անցնում արդիւնքի մէջ, այլ արդիւնքին տրւում է միայն այն արժէքը, որը գտնւում է նիւթի մէջ: Միայն գործադրած աշխատանքն է, որ աւելացնում է նոր արժեք հում նիւթի մէջ գտնւած հին արժէքի վրայ:

Արդիւնաբերութեան գործիքները և մեքենաները գործադրութեան շնորհիւ աստիճանաբար մաշւում են: Մոտոցը, որից օգտւում է աշխատանքի համար փականագործը, գործածութեան համար բթանում, և անպէտքանում է: Մայլը, որով ածուխ են կրում, ինչպէս որ իւրաքանչիւր առարկայ, ժամանակի ընթացքում գործածութեան համար դառնում է անպէտք և այլն: Սակայն շատ դէպքում աշխատանքի գործիքը դիմանում է բաւականին մեծ քանակութեամբ ապրանքների արդիւնաբերութեան: փականագործը մի սղոցի օգնութեամբ կարող է սղոցելով շինել բանալիների մի մասսա. կառապանն իւր սայլով կարող է տեղափոխել անագին քանակութեամբ ածուխ: Այսպիսով եթէ գործածելիք հում նիւթի արժէքը ամբողջովին անցնում է պատրաստ մըթերքների արժէքների մէջ, ապա ուրեմն աշխատանքի գործիքները տալիս են մթերքներին մի այլ իբանց այն արժէքների մի մասը, որը իսկապէս կորցրել են այդ աշխատանքի շնորհիւ: Եթէ օրինակ մէկ սղոցով սղոցում են հարիւր բանալի, ապա այդ բանալիներից իւրաքանչիւրի մէջ մտնում է սղոցի արժէքի 1/100 մասը:

Այստեղից մենք տեսնում ենք, որ աշխատանքի գործիքները, նոյնպէս, ինչպէս և հում նիւթը, չեն ստեղծում ոչ քիչ նոր արժէքի մասնիկներ, չնայած առաջին հայացքից թւում է, որ աւելի կատարելագործւած մեքենաները փոխարինելով մարդկային աշխատանքին պէտք է ազդեն նոր արժէքի ստեղծագործման: Բայց մենք արդէն գիտենք, որ արժէքը առաջանում է միայն մարդկային աշխատանքով: Միայն այդ աշխատանքի շնոր-

հիւ, հանրա-անհրաժեշտ մարդկային աշխատանքի շնորհիւ հում նիւթի մէջ գտնւած արժէքին և այն արժէքին, որն անցել է նոր մթերքներին աշխատանքի գործիքներից, աւելանում է նոր արժէք:

Եթէ օրինակ հում նիւթի արժէքը ներկայացնում է հանրա-անհրաժեշտ մարդկային աշխատանքի 10 ժամայ արժէք, այնուհետև եթէ գործիքների մաշւած մասերը պէտք է համապատասխանեն աշխատանքի 3 ժամայ արժէքի, աշխատանքի գործիքների օգուտեամբ այդ հում նիւթից նոր մթերքներ արդիւնաբերելու համար նորից եթէ պէտք է գործադրել 7 ժամ, ապա այդպիսի դէպքում արդիւնաբերած արդիւնքը պէտք է ունենայ  $10 + 3 + 7 = 20$  ժամայ հանրա-անհրաժեշտ աշխատանքի արժէք:

Ներկայացնենք այդ աւելի պարզ կերպով: Ենթադրենք, օրինակ, որ հանրա-անհրաժեշտ աշխատանքի մէկ ժամը ներկայացնում է 10 կոպէկի արժէք: Չորս բանուր համաձայնում են միասին մի պատ շինելու: Նրանք կաւ են գնում 1000 աղիւս թրծելու համար և վճարում են 50 կոպէկ. կապիտալիստը տալիս է նրանց աղիւսէ գործարանը, սրահը, սայլակները, կաղապարները և ուրիշ պիտոյքներ, որոնցից օգուտելու համար բանուրները վճարում են 60 կոպէկ, ածուխին նորից 60 կոպէկ. իսկ աղիւսները այրելու համար հարկաւոր է 24 ժամայ աշխատանք, որի ժամը հաշւելով 10 կոպէկ, կլինի 2ր. 40 կոպէկ: Այսպիսով 1000 այրած աղիւսի արժէքը պէտք է հաւասար լինի 4 բուբլի 40 կոպէկի:

Բանուրները վճարել են սկզբում հում նիւթին և աշխատանքի գործիքներից օգուտելու արժէքը. բայց այդ վճարած արժէքը նրանք նորից կգտնեն պատրաստ մթերքների, աղիւսի մէջ: Այդ արժէքների հետ նրանք միացրել են իրանց աշխատանքի նոր արժէքը (2 բ. 40 կոպ):

Այդ տեղի է ունենում իւրաքանչիւր առարկայի արդիւնաբերութեան ժամանակ: Նոր արդիւնքի մէջ ամեն ժամանակ գտնուում է, բացի հում նիւթի արժէքից

և մաշւած գործիքների արժէքը, դարձեալ նոր ապրանքի արդիւնաբերութեան համար գործադրած աշխատանքի արժէքը: Այդ օրէնքը բոլորովին չէ փոխւում այն բանից, արդեօք աշխատում են բանուրները հէնց իրանց համար թէ նախաձեռնողի: Եթէ բանուրներն աշխատէին իրանք իրանց համար, այդ դէպքում աղիւսները ծախելու ժամանակ նրանք կտանային աշխատանքի իւրաքանչիւր ժամայ համար 10 կոպէկ: Եթէ այդ դէպքում մենք ենթադրենք, որ բանուրը 60 կոպէկով կարող է ձեռք բերել այնքան անհրաժեշտ առարկաներ, որքան սովորական պայմանների ժամանակ հարկաւոր է պահպանելու իւր և իր ընտանիքի կեանքը, նրա բանուրական ոյժի արժէքը կկազմէր 60 կոպէկ և սրան կ'համապատասխանէր աշխատանքի 6 ժամը: Եթէ բանուրներն աշխատէին միայն 6 ժամ, այդ դէպքում սրանք կարդիւնաբերէին մի օրւայ ընթացքում միայն այնքան նոր արժէք, որքան հարկաւոր է նրանց պահպանութեան: Եթէ միայն նրանք աշխատէին կրկնապատիկ ժամեր, այդպիսի դէպքում նոր արտադրած արժէքը կլինէր 2 անգամ աւելի և հատկապէս կպատկանէր բանուրներին, ինչպէս և ինքն աշխատանքի արդիւնքը-աղիւսները:

Այդ դէպքում երբ բանուրները տալիս են նախաձեռնողին իրանց բանուրական ոյժը, ամբողջ աշխատանքը կայանում է ձիշտ նոյն եղանակով, բայց վերջացնելուց յետոյ ստացւում է բոլորովին այլ հաշիւ:

Ենթադրենք, օրինակ, որ նախաձեռնողն ինքն իւր համար ձեռք է բերում աղիւսների արտադրութեան համար անհրաժեշտ կաւը, ածուխը և յարմարութիւն, վրձարելով դրանց համար այնքան, որքան սկզբում վճարել են բանուրները. բանուրներից էլ գնում է բանուրական ոյժ և վճարում նրանցից իւրաքանչիւրին օրեկան 60 կոպէկ: Եթէ նրանք աշխատէին միայն օրեկան 6 ժամ, ապա ձեռնարկողը տարաբերելով ընդհանուր գումարը կգար այսպիսի եզրակացութեան.

Կաւի համար վճարւած է 50 կոպէկ:  
 Ածուխի » » 60 »

Գործիքներից օգտուելու 60 »  
Չորս բանւորին վարձ (իւրաքանչիւրին 60 կ.) 2 ր. 40 կ.

Գումարը 4 ր. 10 կ.

Այդ փողով նա կստանար 1000 աղիւս, որը կունենանար, ինչպէս մենք տեսանք արժէք՝ (4 ր. 40 կ.) և ամբողջովին կ'համապատասխանէր նրա գործ դրած գումարին այսինքն ձեռնարկողը ոչ մի կոպէկ ոչ կորցրած է ոչ էլ աշխատած կլինէր: Ի հարկէ, նա կարող էր օգուտ ստանալ, ծախելով այդ աղիւսները, բայց նա մտադրութիւն չունի վաճառական դառնալու: Եթէ նա այդ աչքի առաջ ունենար, այդ դէպքում նրան պէտք չէր լինի իր համար աղիւսներ արտադրելու, այլ նա ուղղակի կգրադէր արդէն պատրաստ ապրանքի առևտուրով:

Ներկայ ձեռնարկողի նպատակն է եղել դնած բանւորական ոյժի օգնութեամբ ստանալ յաւելեալ արժէք, այն արժէքի փոխարէն, որը գործ է դրուած սկզբում. այսինքն կապիտալի գործածելու համար գործի մէջ. բայց յիշեալ դէպքում ձեռնարկողն իւր համար ստացել է միայն այնքան ապրանք, որքան ծախսել է ինքը:

Մակայն ձեռնարկողը գիտէ, թէ ինչ պէտք է անի այդպիսի դէպքում. «ձեր օրւայ բանւորական ոյժը—ասում է նա, դառնալով բանւորներին—գնել եմ ձեզանից ամբողջովին, նրանից օգտուելու համար, ինչպէս դուք ինքներդ էլ համաձայնել էք, պատկանում է բացառապէս ինձ: Եթէ ես գնում եմ, օրինակ, կիրօն, ուստի նրա սպառողական արժէքը, այսինքն նրա հիւթը նոյնպէս ինձ է պատկանում: Ես ունեմ լիակատար իրաւունք մինչև վերջին կաթիլը այդ կիրօնից հիւթը մըջել: Չեր օրւայ բանւորական ոյժնը աշխատանքի 6 ժամով ամբողջովին սպառուած չէ, դուք կարող էք երկար աշխատել և ես պահանջում եմ ձեզանից 12 ժամւայ աշխատանք»:

Իրա դէմ ոչ մի հակառակութիւն: Բանւորները սկսում են աշխատել օրեկան 12 ժամ. ի հարկէ կրկնապատիկ աշխատանքի ժամանակ, նրանք կարտադրեն երկու

անգամ աւելի քանակութեամբ աղիւսներ (2000), սպանելով այդ դէպքում 2 անգամ աւելի քանակութեամբ նիւթ: Այժմ ստացւում է այսպիսի հաշիւ:

Չեռնարկողը վճարում է. }  
Կաւի համար 1 ո. } Երկու անգամ  
Ածուխի » 1 » 20 կոպ. } աւելի առաջ-  
Աշխատանքի գործիքն. համար 1 ո. } ւանից:  
Չորս բանւորներին

(Իւրաքանչիւրին օրեկան 60 կոպ.) 2 ո. 40 կ.  
(այնքան ինչքան առաջ):

Գումարը 5 ո. 80:

Այսքան, փող ծախսեց կապիտալիստը և ստացաւ 2000 աղիւս: Իւրաքանչիւր 1000 աղիւսը, ինչպէս մենք տեսանք վերոյիշեալ հաշւից ներկայացնում է 4 րուբ. 40 կոպ. արժէք. երկու հազարը 8 ր. 20 կոպէկի. ուրեմն նա ստացաւ 2 ր. 40 կոպէկ աւելի, քան ինքը ծախսել է Այդ 2 ր. 40 կոպէկն է յաւելեալ արժեք (կապիտալիստի օգուտը): նա հաւասար է յատկապէս նոր արժէքի ճիշտ: այն քանակութեան, որը սկիւմայից համաձայնելով բանւորները ստիպւած են եղել աշխատել 6 ժամ աւելի. 4 բանւորներից իւրաքանչիւրն աշխատել է ամեն օր, օրեկան 6 ժամ աւելորդ, ընդամենը 24 ժամ, որը և կազմում է յատկապէս մեր յաւելեալ արժէքը—2 ր. 40 կոպ:

Առևտրական. կապիտալը սեփականատիրոջը կարող է միայն այն ժամանակ օգուտ տալ, երբ այդ սեփականատէրը էժան գնով ապրանք է գնում և ծախում թանգ, քան թէ նա իսկապէս արժէ: Վաշխառուական կապիտալը կատարելապէս յարաբերութիւն չունի ապրանքի հետ: Միայն ժամանակակից արդիւնաբերական կապիտալը կարող է վճարել ապրանքի համար նրա արժէքը, ծախել ապրանքն ըստ նրա լիակատար արժէքի և միևնոյն ժամանակ ստեղծել իր համար յաւելեալ արժէք:

Իսկ այդ հնարաւոր է այն ժամանակ, երբ բանւորները ստիպւած են ծախել իրանց բանւորական ոյժը,

ստանալով միայն արժէքի մի մասը:

XIII.

ԿՍՊԻՏՄԼԻ ԱՃՈՒՄԸ

Մենք տեսանք, թէ ինչպէս է կապիտալիստը յաւելեալ արժէք ստանում, նա գնում է շուկայական գնով—բանւորական ոյժը, ստիպում է աշխատել հուճ նիւթի վրայ, գնած գործիքների օգնութեամբ և ծախում է այսպիսով արտադրած ապրանքները, ոչ միայն ստանալով իր ծախսած փողը, այլ և յաւելեալ արժէք:

Ստացած յաւելեալ արժէքի մի մասը, ձեռնարկողը ծախսում է սեփական պիտոյքների համար, իսկ մնացած աւելացնում կապիտալի վրայ: Այժմ նրա կապիտալը մեծ կլինի, քան առաջ. և հետևապէս կապիտալիստը կարող է գնել աւելի շատ բանւորական ոյժ և որովհետև իւրաքանչիւր բանւոր էլ բերում է որոշ օգուտ, հետևապէս և ձեռնարկողի հարստութիւնը աւելի կմեծանայ: Մեծ եկամուտները նորից հնարաւորութիւն են տալիս կապիտալը մեծացնելու և գնելու աւելի շատ բանւորական ոյժ և այլն:

Հետևապէս կապիտալի աճումից է կախւած բազմանալը և կեցութիւնը բանւոր դասակարգի: Այս յարաբերութեան մէջ, բանւորների և կապիտալիստի շահը համապատասխան են, բանւորը կըոչնչանայ, եթէ կապիտալիստը նրան գործ չտայ. կապիտալն էլ զուր տեղը կը կորչի, եթէ բանւորական ոյժ չգնի: Ուստի ինչքան արագ է աճում արդիւնաբերական կապիտալը, ինչքան աւելի է զարգացած արդիւնաբերութիւնը, այնքան հարկաւոր է բանւորը, այնքան նա պէտք է թանգ ծախի իւր բանւորական ոյժը: Ուրիշ խօսքերով. բանւորների, գոնէ տանելի կերպով գոյութիւնը պահելու, իբրև անհրաժեշտ պայման ներկայանում է արդիւնաբերական կապիտալի կարելւոյն չափով առագ աճումը:

Բայց միևս կողմից կապիտալի մեծութիւնը ցոյց է

տալիս կապիտալիստների գորութեան մեծանալը և նրանց ազդեցութեան աւելի մեծ տարածւելը վարձկան բանւորների վրայ:

Այժմ առաջ բերենք աւելի նպատակահարմար դէպք, մանաւանդ, երբ կապիտալի աճման հետ աճում է աշխատանքի խնդրանքը, հետևապէս և աշխատանքի գինը— աշխատավարձը:

Փոքրիկ տնակը կատարելապէս բաւարարութիւն կտար սեփականատիրոջ կարիքներին, քանի որ նրա խրճիթի շրջապատողները նոյնպէս մեծ չեն: Բայց ենթադրենք ոչ հեռու նրանից շինուում է երկու-երեք մեծ տուն և մեր տնակն կերևայ որպէս մի ծառայի խրճիթ իբրև ապացոյց այն բանի, որ նա դեռ աղքատ է համեմատած մեծ տան սեփականատիրոջ հետ: Եթէ մինչև անգամ ժամանակի ընթացքում փոքրիկ տնակն երկու անգամ մեծանար, դրա հետ էլ միասին նոյնպէս հարեան մեծ տուն, ապա տնակի բնակչին ծանր և նեղւածք կլիւար պարելու համար:

Իւրաքանչիւր որևէ աշխատավարձի աչքի զարնող բարձրանալն ենթադրում է կապիտալի արագ աճումը. կապիտալի արագ աճումը քաշում է իւր ետևից հարրստութեան, շքեղութեան, կարիքների և զւարճութիւնների ահուելի շատանալը: Եւ դրա համար չնայած բանւորների համար ապրուստի հարմարութիւնները մի քանի անգամ աւելացել է, բայց աւելի աճել է նրա կարիքները, որոնց չէ կարող բաւարարութիւն տալ: Նշանակում է բանւորը, ինչպէս և մեր տնակի սեփականատէրը զգում են իրանց աւելի անհախտ քան առաջ:

Աշխատավարձը պէտք է գնահատել յարաբերական չափով—համեմատելով նրան կապիտալիստի ստացած արդիւնքի հետ, մի խօսքով պէտք է խօսել յարաբերական աշխատավարձի մասին:

Ենթադրենք, օրինակ, որ կեսնքի բոլոր անհրաժեշտ միջոցների արժէքն իսկել է  $\frac{2}{3}$ -ով (զրվանքան 9 կոպէկանոց հացը դարձել է մէկ կոպէկանոց), արդէն այն ժամանակ, երբ աշխատավարձը ցածրացել է միայն  $\frac{1}{2}$ -ով (60—40):

Չնայած բանւորն այժմ 40 կոպէկոյ գնում է աւելի շատ ապրանք, քան առաջ 60 կոպէկով (առաջ 60 կոպէկով նա ստանում էր միայն 20 գրվանքայ հաց), այնուամենայնիւ նրա աշխատավարձը համեմատած կապիտալիստի ստացած արդիւնքի հետ, ցածրացել է, որովհետեւ աւելի քիչ փողով նա տալիս է կապիտալիստին աշխատանքի այնքան քանակութիւն, ինչքան առաջ: Կապիտալիստը հէնց այն կապիտալի ժամանակ էլ, որն եղել է նրա մօտ սկզբում, կարող էր դնել աշխատանքի աւելի մեծ քանակութիւն: Այսպիսով մենք տեսանք, որ աշխատավարձը և օգուտն իրար հակադարձ յարաբերական են. օգուտը բարձրանում է այն չափով, ինչ չափով ցածրանում է վարձը և ընդհակառակը:

Մինչև այժմ մենք ենթադրել ենք, որ արդիւնաբերական կապիտալը իր աճման համեմատ աշխատանք է տալիս աւելի մեծ թւով բանւորների և նպաստում է աշխատավարձի բարձրանալուն: Բայց այդ արդեօք ամեն ժամանակ է լինում: Քննելով ուշադրութեամբ, մենք պէտք է այդ հարցին բացասական պատասխան տանք:

Բայց և այնպէս, կապիտալի աճման հետ միասին կապիտալիստների թիւը և հարստութիւնը մեծանում է: Կապիտալիստների թւի մեծանալով առաջանում է կապիտալիստների մէջ մրցումն և իւրաքանչիւրն աշխատում է յաղթել նրան իւր միջերջների էփանութեամբ: Բայց որպէսզի հնարաւորութիւն ունենայ էփան ծախելու առանց վնասի, կապիտալիստը պէտք է արդիւնաբերի էփան գնով, այսինքն, որքան հնարաւոր է մեծացնի բանւորների աշխատանքի արդիւնաբերութիւն: Աշխատանքի արդիւնաբերութիւնը ամենից առաջ մեծանում է աշխատանքի մեծ բաժանմամբ, նոր մեքենաների կիրառութեամբ և հսկրի կատարելագործութեամբ: Ենթադրենք այժմ, որ այդպիսի կիրառութեան և կատարելագործութեան պատճառով, կապիտալիստը հնարաւորութիւն է ստացել արդիւնաբերել աշխատանքի

ըլ միևնոյն քանակութեան միջոցին էլ աւելի շատ քանակութեամբ ապրանք, քան նրա մրցակիցները, օրինակ, ենթադրենք, նա կարող է գործել մի արշին կտաւըն այնքան ժամանակակայ ընթացքում, որքան հարկաւոր է նրան մրցակցին կէս արշին գործելու համար: Այդ ժամանակ նա կարող է մի արշին կտաւը ծախել առաջւայ գնով և ստանալ աւելի եկամուտ: Բայց, չէ որ նրա կատարելագործւած մեքենաները և լայնատարած գործարաններն աւելի մեծ քանակութեամբ են կտաւ արտադրում քան առաջ: Ուրեմն նա պէտք է գտնի նոր շուկայ իր ապրանքն սպառելու համար: Իսկ նոր գնողներ նա կարող է գտնել այն դէպքում, եթէ սկսի կտաւն աւելի էփան գնով ծախել, քան իր մրցակիցները: Ի հարկ է, նա չպէտք է ծախի մի արշին կտաւն այն գնով, ինչ գնով, ծախել է առաջ կէս արշինը, որովհետեւ նրա մտքրած բարելաւումը չէր բերի նրա համար ոչ մի օգուտ, որովհետեւ նա ընդհանրապէս աշխատել է այնքան, որքան և առաջ, բայց դրա հետ միասին նա ստիպուած կլինէր փնդրել Չ անգամ աւելի կտաւի քանակութեան գնողներ, որն արտադրում է այժմ իւր գործարանում: Միւս կողմից գների այդպիսի ընկնելը չէ ներկայանում նրա համար անհրաժեշտ թիւն: Լիութեամբ եթէ նա ծախում է իւր կտաւը, թէ և արշինը գտնէ կէս կոպէկ էփան, քան միւս գործարանատէրերը—միայն այդ դէպքում նա կարող է գտնել լիութեամբ գնողներ և հեռացնել զբանց իրա մրցակիցներից:

Միայն այդպիսի արդիւնաւէտ դրութիւն կապիտալիստը շարունակաբար ունենայ, նրա հետ մրցող կապիտալիստները նոյն կամ աւելի քանակութեամբ բարւոքւած մեքենաներ կբերեն և կսկսեն նոյնպէս էփան գնով ապրանքներ արդիւնաբերել: Որպէսզի նորից քաշեն իրանց մօտ սպառողներին, կապիտալիստները պէտք է նորից էփան գնով ծախեն, քան թէ իրանց մրցակիցները, վերջ ի վերջոյ, կտաւի գինը աւելի կցածրանայ,

մինչև արդիւնաբերութեան ծախսերի մակերևոյթը (հաւասարացումը):

Կապիտալիստները այժմ իրենց նոյն դրութեան մէջ կզգան ինչ դրութեան մէջ որ էին նախ քան նոր մեքենաների մտցնելը և դրա հետ միասին նրանք ստիպւած կլինեն արդիւնաբերել 2 անգամ աւելի քանակութեամբ կտաւ և գտնել սպառողներ: Նշանակում է նրանցից իւրաքանչիւրը կրկին պէտք է աշխատի մրտցնել որևէ նոր կատարելագործութիւններ, որպէսզի հնարաւորութիւն ունենայ միւսներից էժան ծախելու և այդպիսով սպառողներին իրա մօտ քաշելու: Եթէ այդ յաջողւի կապիտալիստին նորից նրա այդպիսի յաջողութիւնը տևողական չէ, որովհետև նրա մրցակիցներն իսկոյն կհետևեն նրա օրինակին և նորից կկրկնւի նախկին պատմութիւնը:

Եթէ կապիտալիստն օգտւէր այդ կուում աւելի կատարելագործուած մեքենաների օգնութեամբ, ապա մրցումը շատ շուտով կգառնար հանրա-գործական և կատարելագործուած արդիւնաբերութեան հետևանքը կլինէր միայն այն, որ այժմ միեւնոյն գնով կապիտալիստը կհայթհայթէր 10, 20, 100 անգամ աւելի մեծ քանակութեամբ ապրանք, քան առաջ և բացի այդ ստիպւած կլինէր փնտրել 10, 20, 100 անգամ շատացած արդիւնաբերութեան քանակութեան սպառողներ: Նշանակում է կապիտալիստը, չնայած իր ջանքերին, ոչինչ չի շահի, բացի պարտաւորութիւնից արտադրելու մթերքների աւելի մեծ քանակութիւն միևնոյն ժամանակի ընթացքում: Մի խօսքով կապիտալիստը ստեղծելով աւելի դժւար պայմաններ իւր կապիտալը մեծացնելու համար, հարկադրւած է մտցնել բոլոր նոր կատարելագործութիւնները, աշխատանքի էլ աւելի մեծ բաժանում:

Ինչ ազդեցութիւն ունեն այդ պայմաններն աշխատավարձի վրայ:

Աշխատավարձի աւելի մեծ բաժանումն և աւելի լաւ գործիքները հնարաւորութիւն են տալիս մէկ բան,

ւորի կատարել այնպիսի գործ, որպիսին կ'կատարէին առաջ 5, 10—20 բանւորներ: Այնտեղ, օրինակ, ուր առաջ հարկաւոր էր 1000 բանւոր, այժմ բաւական է, ենթադրենք 100, իսկ 900-ը կնան փողոցում, և իրանց մրցումով կզցեն գործ ունեցողի աշխատավարձը:

Նկատել պէտք է, որ աշխատանքի աւելի մեծ բաժանումն հետ միասին, աշխատանքը հեշտանում է (դառնում է հասարակ): Բանւորից արգէն չէ պահանջւում առանձին նախապատրաստութիւն և տոկոսութիւն, այլ սովորական բանւորական ոյժ: Աշխատանքը դառնում է իւրաքանչիւրին մատչելի. ամեն կողմից ներկայանում են մրցողներ և քաղցի ու կարիքի ճնշումից պահանջւում աւելի քիչ աշխատավարձ: Այդ ցածրանալը ևս աւելի ուժեղանում է կանանց և երեխաների մրցմամբ որոնց համար նոյնպէս մեքենաների վրայ աշխատելը մատչելի է դարձել:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ ինչքան աճում է արդիւնաբերական կապիտալը, այնքան տարածւում է աշխատանքի բաժանումը և մեքենաների կիրառութիւնը իսկ ինչքան տարածւում է աշխատանքի բաժանումը և մեքենաների կիրառութիւնը, այնքան արագ բանւորների մէջ մեծանում է մրցումը, այնքան աւելի ընկնում աշխատավարձը:



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	Ներքեւից	Վերեւից	Տպւած է	Պէտք է լինի
I	9-դ. տող.	—	ուժեղացրել էր	ուժեղացել էր
II	—	17	նա կարողանար	նա կարողանայ
IV	11	—	խրճիթ իր համար	խրճիթ պատրաստում իր համար
—	8	—	կատարեալ ասէս	կատարելապէս
VIII	4	—	վերջի ներջոյ	վերջի վերջոյ
2	6	—	բաւաւարութիւն	բնատրութիւն
24	—	12	10 աչեչն	10 աղեղն.

Յովհաննէս Դարեանի հրատարակութեամբ լոյս եկն տեսել՝


1. Մ. Գորկիյ, Մահար Չուզրա, թարգմ. Ս. Բարիեան . . . . . 10 կ.
2. Ս. Բարիեան, Բանաստեղծութիւններ . . . . . 20 կ.
3. Լ. Անդրէէ, Անդունդը, թարգմ. Ս. Բարիեան . . . . . 10 կ.
4. В. Папазянъ, Луръ-да Луръ. Нагой Дервишъ, թարգմ. հայերէնից Վ. և Ս. Բարիեաններ . . . . . 12 կ.
5. Մօպսան, Մի կեանք, թարգմ. Ս. Տէր-Անանեան . . . . . 1 ր. —
6. А. Агаронянъ, Разказы: Кусочекъ хлѣбца, Пѣтухъ, թարգմ. հայերէնից Վ. Բարիեան . . . . . 10 կ.
7. Ս. Աննենակայա, Հանրապետութիւն թարգ. Ս. Տէր-Անանեան . . . . . 5 կ.
8. Ս. Բեբել, «Քրիստոնէութիւնը և սօցիալիզմը» թարգմ. Ս. Տէր-Անանեան . . . . . 10 կ.
9. Ս. Բուսովա «Ձւիցերիա ազատ ժողովրդական հանրապետութիւն» թարգմ. Ս. Տէր-Անանեան . . . . . 15 կ.
10. Վ. Բրակէ, Կորչեն սօցիալ-դեմօկրատները . . . . . 15 կ.
11. Բ. Ս. Կապիտալ և Աշխատանք թարգ. Ս. Յ. . . . . 20 կ.

Տպագրում է եւ տւտով լոյս կը տեսնի՝

12. Է. Վանդերվելդ, Իդիալականութիւնը Մարքսիզմի մէջ:

Դիմել հրատարակչին՝ Армянск. (Таврической губ.)  
Ивану Давидову, և կովկասեան գրավաճարներին:

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 15 horizontal lines, with some lines appearing to be numbered or bulleted. The ink is very light and difficult to discern against the aged paper background.



ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

« Ազգային գրադարան



NL0192758

